ԿՐԻՐ ԴԻՄԱԿ,
ՓՐԿԻՐ ԿՅԱՆՔԵՐ

Թիվ 21 (3474), ուրբաթ, 19 հունիսի 2020 թ.

Գրական թերթ

ISSN 1829- 1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-Ի Ց

Տպագրվում է ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ

www.grakantert.am

Սամվել ԿՈՍՅԱՆ

ԻՇԽԱՆԱՏԵՆՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՃԱՐԱԿ

Մերժված և հարություն առնելու անուրջներով տարված մի շարք ուժեր շարունակաբար փորձում են հանրությանը համոզել, որ երկիրը անդունդի եզրին է, որ այսպես շարունակվելու դեպքում երկրի և պետականության անկումն անխուսափելի է: Եվ որպես համաժողովրդական ողբի հանցավորի՝ մատնանշում են վարչապետ Նիկոլ Փաշինյանին ու նրա ղեկավարած կառավարությունը: Փրփրաբերան հայտարարում են, որ երկիրն ու պետականությունը փրկելու միակ ելքը վարչապետի հրաժարականն է: Միայն չեն ասում, թե վարչապետի հրաժարականից հետո իշխանության գալով՝ ի՞նչ են անելու և ինչպե՞ս ու ինչո՞վ են երկիրը անդունդից դուրս քաշելու: Հավանաբար մտածում են, որ ներկա պահին առաջնայինը իշխանությունը զավթելն է, ինչից հետո այնքան էլ կարևոր չէ՝ կկարողանա՞ն անդունդը հաղթահարել, թե՞ ոչ: Ծախու լրագրողների, քաղաքագետների, իրավապաշտպանների զորահավաք են հայտարարել, նպատակը՝ ամենաանհավանական միջոցներով հնարավորինս վարկաբեկել Փաշինյանի ոչ միայն գործունեությունը, այլև՝ անձը, հազար ու մի մեղքերի մեջ մեղադրելով՝ ժողովրդի աչքում զրոյացնել ղեկավարի նրա վարկանիշը՝ մոռանալով ֆիզիկայի ամենատարրական օրենքներից մեկը՝ ինչ ուժով ազդում ես, պիտի սպասես առավել ուժգին հակազդեցությանը: Երկրում փաստացի իշխանատենչության համաճարակ է, որի դրսևորումներն արդեն իսկ ահազանգ են, որ այն կորոնավիրուսից ավելի խորքային հետևանքների կարող է հասցնել: Նոր վարակի ախտանիշերն են հիշողության կորուստը, իրականությունը գնահատելու անկարողությունը, անողնաշար ցնորքներին անվերապահորեն ենթարկվելը, դռնից դուրս հանելուց հետո պատուհանից ներս մտնելու համառությունը, ինքնաքննադատության իսպառ բացակայությունը, ներկա իշխանությունից ամենուր և ամենքին բողոքելու՝ խելագարության հասցնող ցանկությունը, սադրանքի ու շանտաժի ժանրով ստեղծագործելը: Վարակվածներից յուրաքանչյուրը մտածում է, ավելին՝ սկսել են բարձրաձայնել, որ վարչապետին տապալելուց հետո իրենք են լինելու հաջորդ իշխանությունը: Առայժմ կարևորը երկրի ճակատագրի շուրջ տագնապի ու խուճապի համաճարակը կորոնավիրուսից ավելի արագ տարածելն է, որն, ըստ իրենց սցենարի, ի վերջո թույլ կտա երազանքի հանգրվանն ապահովել: Արդեն հայտարարում են, որ վարչապետի վարկանիշը 20 տոկոսի էլ չի հասնում՝ համեստորեն լռելով իրենց վարկանիշի մասին: Նրանցից յուրաքանչյուրին թվում է՝ վարչապետի տասնյակներով կորած տոկոսներն իրենց են բաժին հասել: Ու ենթադրելի է, որ մշակված սցենարն իրականացնելու դեպքում յուրաքանչյուրն իշխանություն լինելու ի՛ր առաջնահերթությունը պիտի պաշտպանի: Եվ կպարզվի, որ իշխանությանը տիրանալու հավակնորդները տասնյակից ավելի են, և, բնականաբար, առաջին պլանում կրկին կխորանա սադրանքների ու շանտաժի ախտանիշը: Կմոռանան, որ երկիրն ու պետականությունը փրկելու առաքելությունն էին ստանձնել: Կփորձեն իրարից սոցիալական ապահովության տարածություն սահմանել, մեկը մյուսին վարակակիր պիտակավորել, մեկը մյուսին դավաճանության և դավադրության մեջ մեղադրել, միմյանց անաչառությունը ստուգելու թեստավորում կազմակերպել, քանի որ յուրաքանչյուրը հավատացած պիտի լինի, որ ի՛նքն է միակն ու ամենաարժանին: Իրավիճակը շտկելու ելքը թերևս կարող է այն լինել, որ կա՛մ երկիրը տասից ավելի վարչապետ ունենա, կա՛մ էլ իսկապես սկսեն իրենց պայքարի ժապավենը նորից պտտել՝ հիմա արդեն ոչ թե Նիկոլի, այլ՝ յուրայինների դեմ: Ի՜նչ ժողովուրդ, ի՜նչ երկիր, ի՜նչ պետություն... Չբավարարված ախորժակը կուրացնում է, չբավարարված ագահությունը թուլացնում է մկանները: Եվ սկսվելու է միմյանց վրա կուրորեն քարեր նետելու ժամանակը՝ չմտածելով քարերը հավաքելու ժամանակի մասին, քանի որ չգիտեն՝ քարերն ի՛նչ ուղղությամբ, ո՛ւմ վրա և ինչո՛ւ են նետել... Իշխանատենչության վարակից, հնարավոր է, զոհեր էլ լինեն, քանզի էլ ի՞նչ համաճարակ, որ իր դիմակավոր կամ անդիմակ զոհերը չունենա: Մինչդեռ, ժողովուրդը շարունակելու է հավատալ, որ անցյալն իսկապես անցյալում է, և որ իրական փրկությունը միայն առաջ գնալով է հնարավոր:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ



ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՀՐԱՉԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆԻՆ

ՀԳՄ ԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՄԱՐ
ՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՔՈՎԻԴ - ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՀՐԵՇԸ՝ ԿՈՉՎԱԾ ԺԱՀՐ

Ալիտա ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Համավարակը, որը ճարակել է երկրագունդը, հիշեցնում է հրաշապատում հեքիաթների անտեսանելի հրեշին:

Բոլոր հրաշապատում հեքիաթներն անպայմանորեն ունեն բարու հաղթանակն ու հրեշի պարտությունը: Մենք էլ դուրս կգանք հաղթանակով:

Սակայն առայժմ կյանքը լիովին փոխվել է ամեն մարդու համար՝ արդեն գիտակցող երեխայից մինչև 100-ամյա ծերը: Մարդը սիրում է հետաքրքրություններով լի իրական կյանքը:

Ինչը որ պատմում եմ, իրական է: Երեք տարեկան և մեկ ամսական աղջիկը, որը ծնողների հետ փակված է տանը, ճանձրացած միօրինակ կյանքից՝ խաղալիք հեռախոսով զանգում է Միկի Մաուսին ու գանգատվում, թե շատ վատ է զգում, չի գնում մանկապարտեզ, չի խաղում ընկերների հետ: Հետո փոխելով ձայնը՝ տալիս է Միկի Մաուսի պատասխանը, որը խորհուրդ է տալիս ինքն իր հետ խաղալ, ուտել և նման բաներ:

Համավարակի օրերին եռանդուն մարդը, որը նախապես է կազմում իր ծրագրերը, դրանք կորցրեց: Մեր ամբիոնը, բանասիրական ֆակուլտետի դեկան Աշոտ Գալստյանի աջակցությամբ, 2020-ի ապրիլի վերջին 2 օրով միացյալ գիտաժողով ուներ Արցախի համալսարանի հետ՝ Գանձասարում: Այն նվիրված էր հայ ժողովրդի մեծագույն զավակներից մեկի՝ Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին: «Ղևոնդ Ալիշանը՝ հանրագիտակ» ժողովածուն՝ երկու համալսարանների դասախոսների հոդվածներով, արդեն լույս է տեսել: Սակայն, ավաղ, այնքան ցանկալի գիտաժողովը չկայացավ:

Շնորհիվ մեր բուհի ղեկավարության հեռատեսության՝ բանասիրական ֆակուլտետում և բուհում ուսումնական գործընթացը չտուժեց: Արդեն չորս տարի է, ինչ բուհում գործում է ուսանողներին և դասախոսներին միմյանց կապող classroom ծրագիրը, որի շնորհիվ մեկ դասաժամ անգամ պարապուրդ չունեցանք: Նույն ձևով անցկացրինք ընթացիկ ու ամփոփիչ քննությունները: Պետական որակավորման քննության հանձնաժողովի նախագահ Վարդան Դևրիկյանը, հրավիրված անդամներ գրականագետ Սիրանուշ Մարգարյանն ու Պեյո Յավորովի հիանալի դպրոցի տնօրեն Սուսաննա Դավթյանը համոզվեցին, թե որքան հմուտ են տիրապետում մեր ուսանողները հեռավար ուսուցմանը: Սակայն, ինչ խոսք, առանձնահատուկ հաճույք է ուսանողին անձամբ և ոչ թե էկրանից հանդիպելը:

Համավարակը փոխեց մեր առօրյան. որոշ մոռացված հմտություններ դարձան կարևոր: Օրինակ, ինքդ կտրիր քո մազերը, դարձիր քո մատնահարդարը, հիշիր երիտասարդ տարիներին թխած թխվածքների բաղադրատոմսերն ու ինքդ թխիր և գյուտ արածի նման հասկացիր, որ քո պատրաստածն անհամեմատ համեղ է: Ուրախացիր, որ ունես հսկա բաց պատշգամբ ու շաբաթը մեկ անգամ օճառաջրով այն լվանալը համարիր ոչ թե ավելորդ հոգս, այլ՝ ֆիտնես ակումբ հաճախել: Քույրս, որն ապրում է Երևանում, և որին երեք ամիս է՝ չեմ տեսել, ասում է, թե զգում է որպես երկարաժամկետ թռիչքի դուրս եկած տիեզերագնաց: Անկեղծ ասած՝ երբ գնում եմ բանկոմատից դրամ հանելու, դեղատուն կամ խանութ, ինձ թվում է, թե ռմբակոծության տակ եմ, մանավանդ՝ ես դիմակով ու ձեռնոցով եմ, իսկ ոմանք՝ ոչ:

Շատ եմ կարոտում մեր սքանչելի Երևանի առօրյան, հատկապես, որ չեմ կարողանում գնալ ինձ այնքան հարազատ համալսարան, Մատենադարան, ակադեմիա, Գրողների միություն, հանդիպել ինձ սիրելի մարդկանց, անչափ կարոտում եմ ընկերուհուս՝ Լաուրա Մուրադյանի կամ ընկերոջս՝ Նորայր Ադալյանի հետ պարբերաբար Երևանի հիանալի սրճարաններում մեր հանդիպումներն ու մտերմիկ զրույցները: Մեզ մնում է մեծն Հովհաննես Թումանյանի նման երազել.

Լինե՜ր հեռու մի անկյուն,
Լինե՜ր մանկան արդար քուն,
Երազի մեջ երջանիկ,
Հաշտ ու խաղաղ մարդկություն:

ՔՈՎԻԴ - ՔՐՈՆԻԿՈՆ

Հովիկ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Այսօր մարդկությունը չհայտարարված պատերազմի մեջ է: Բայց սա սովորական պատերազմ չէ, որովհետև հակառակորդն անտեսանելի ու առայժմ անընդունելի է: Մինչև ճանաչվի, ու նրան ոչնչացնելու զենք ստեղծվի, կորոնավիրուսը կիրականացնի իր

ԱՄԵՆ ԻՆՉ ՈՒՆԻ ԻՐ ԳԱԼՈՒ ԵՎ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

«առաքելությունը»: Սա մի թշնամի է, որը ոչ թե սպանելու է միայն հիվանդացնելով, այլև, հիմնականում, տնտեսական ճգնաժամի հետևանքներով: Աշխարհը կլցվի ոչ թե դիակների նեխահոտով, ինչպես նախկին շատ համավարակների ժամանակ, այլ՝ քաղցից մեռնողների աղաղակներով:

«Հավերժական շարժում» անտիպ վեպիս մեջ նաև այս համամարդկային պատուհասի մասին է գրված:

«21-րդ դարի աշխարհատերերը, իրենց ձեռքին կենտրոնացնելով աշխարհի կապիտալն ու լրատվամիջոցները, նորից ու նորից ցանկանում են վերակառուցել բաբելոնյան աշտարակը: 1717 թ. հունիսի 24-ին Լոնդոնում ստեղծված մասոնական օթյակը, միացած «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի հետ, միմյանցից առաջ անցնելով, Բաբելոնի ավերված շինություններն են վերականգնում: Աշխատում են ստեղծել համաշխարհային ստրկատիրություն, բանական մարդու փոխարեն՝ ռոբոտներ, մարդուն զրկել Արարչի ստեղծած պատկերից»:

«Սատանային ծառայող այդ գործակալներն իրենց ամենակարող աստվածներ են համարում, փակում Լույսի ճանապարհը, ասպարեզ հանում Սուտը և խտացնում հոգևոր խավարը: Ուղղափառ եկեղեցիներում քահանաները միասեռականների ամուսնության ծիսակատարություն են անում: Դատարկ ու անգործ տաճարները վարձով տրվում են անպատկառության շոումեններին»:

Բնական է, որ այս ամենն անհետևանք չէր կարող անցնել, և մի օր պիտի գար հատուցման ժամը:

Սակայն յուրաքանչյուր ազգ, յուրաքանչյուր անհատ յուրովի է ընկալում այս ամենը: Որոշ գործարարներ աշխատում են օգտվել հարմար իրադրությունից՝ հարստություն դիզել, ոմանք սնանկանում ու կործանվում են, որոշ արվեստագետներ հուսահատվում են, անգործության մատնվում, իսկ ոմանք ինքնամեկուսացումն օգտագործում են ազատ ստեղծագործելու նպատակով:

Ես այս ամիսների ընթացքում ժամանակն ավելի նպատակահարմար եմ օգտագործել: Այսօր հրատարակելու պատրաստ մի քանի գիրք ունեմ: Վերջնական տեսքի եմ բերել «Հավերժական շարժում» վեպս: Պատերազմի ավարտից մինչև հիմա մտքսումս անընդհատ պտտվում ու չէր ծնվում «Չինվորները ծնվում են մարտադաշտում» վիպակը, որի բովանդակությունը 1994 թվականի գարնան պատերազմական իրադարձություններն են: Վերջապես կարողացա գրել, արդեն գրասեղանիս է ու սպասում է իր ժամանակին:

Կորոնավիրուսն իր գործն է անում, արվեստագետն՝ իր: Դժվար, բայց ստեղծագործողի համար, կարելի է ասել, նպաստավոր ժամանակներ են: Աշխարհատերերի ժամանակն էլ հավերժական չէ, նրանք մի օր կընկնեն մարդկության դեմ իրենց լարած թակարդը: Ամեն ինչ ունի իր գալու և գնալու ժամանակը, կորոնավիրուսը նույնպես կգնա, կգան լավ, լուսավոր, ազատ օրեր: Վիրուսն իր համար բնակվելու տեղ կգտնի, զինադադար կամ հաշտության պայմանագիր կկնքվի մարդկության հետ: Արդյունքում՝ կգան նոր ժամանակներ, մարդը նույնպես կհարմարվի այդ ժամանակներին, ու կյանքը կշարունակվի նոր պայմաններում:

Նոնա ՊՈՂՈՍՅԱՆ

ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓ

Կորոնիկ... Ահա այսպիսի անուն են հորինել երեխաներս այս սարսափելի վարակի համար: Բայց փաղաքշական այս ձևը հաստատ սրան չի սազում...

Բոլորիս թվում էր՝ սա էլ, իր մյուս «ցեղակիցների» պես, մի քիչ կզգաստացնի մեզ, մի քիչ կվախեցնի ու կհեռանա: Բայց, ցավոք, հիմնավորվեց ու այսօր իր ներգ «հունձն» է անում...

Արդեն հասցրել եմ ճաշակել իմ շրջապատից մի քանի սիրելի մարդկանց կորստի ծանր մղձավանջը...

Բայց հիմա ավելի շատ ուզում եմ խոսել կարևոր մի հարցի մասին, որն արդեն տևական ժամանակ է՝ ինձ հանգիստ չի տալիս: Այն մասին, թե ինչպես է այս համավարակը խարխլում մարդկային հարաբերությունների՝ նախկինում կանգնեցված հենասյուները, ու թե մենք ինչպիսի՛ ճիգերի շնորհիվ միայն կկարողանանք մեր ուսերին պահել այդ հարաբերությունների փլվող տանիքը, որ վաղը գոնե կարողանանք իրար աչքերի մեջ նայել:

Երևի երբևէ այսչափ խորությամբ չէի ընկալել, թե որքան կարևոր են ֆիզիկական շփումները մարդկային հարաբերություններում: Դրա կարևորության գիտակցումը մեր ընկալումների հարթակից ինքնաբերաբար դուրս էր մղվել՝ մեզ սթափեցնելու որևէ ջանք չգործադրելով, որովհետև դեռևս չկար նրա բացակայության աղետալի լինելու գիտակցումը մեր մեջ:

Մեր գենոֆոնդի ակունքներով դարերի ընթացքում մեզ փոխանցված տաքարյունությունն ու ջերմեռանդությունը, միմյանց հետ հարաբերվելու մեր «համայնքային» դրսևորումները, որով էլ տարբերվում ենք շատ ու շատ ազգերից, այսօր կանգնած է փորձության առջև, և այդ փորձության միակ թիրախը մենք ենք:

Ու մենք այսօր խոցելի ենք առավել, քան երբևէ: Որովհետև այս դժվարին իրավիճակը բոլորիս ստիպում է «շտկումներ» կատարել մարդկային շփումներում (նկատի ունեմ ֆիզիկականը), սակայն, մենք առավել, քան երբևէ, պատրաստ չենք դրան: Ու խարխլվում է մեր հոգու այն հիմնապատը, որի վրա կառուցել էինք հարաբերությունների «տունը»՝ չնայած այն բանին, որ վաղուց, արդեն տարիներ շարունակ, փայլուն դերակատարություն էինք ստանձնել վիրտուալ շփումների հարթակում. երբեմն նույնիսկ զավեշտի կամ անհեթեթության հասնող դերակատարություն...

Ու թվում է, թե մենք, առավել, քան երբևէ, պիտի պատրաստ լինենք «դուրս մղելու» մեր հարաբերությունների ձևերից այդ «ֆիզիկական» կոչվող բաղադրիչն ու ապրել այս գերինֆորմացիոն ու գերքվանտային ժամանակաշրջանին բնորոշ մարդկային «հումքի» կարգավիճակով:

Բայց, ո՛չ...

Այսօր, երբ այսչափ արագորեն այս ու այն կողմ է տեղաշարժվում մեր կեցության առանցքը, հարկադրված ենք կրկին վերաձևակերպել ու վերահմաստավորել մեր հարաբերությունների՝ նախկինում գործող ձևաչափը: Համավարակի իրավիճակում մենք ենթարկվում ենք հարաբերությունների այնպիսի ձևախեղման, որի ժամանակ շատ է դժվարանում զգալ մեր տեսակին պատկանող ուրիշ մեկի ջերմությունը, նրա էներգիան կամ աուրան: Մենք արդեն ապրում ենք բոլորովին այլ չափումներում, ուր հպանցիկ տեղեկությունները դառնում են դոմինանտ, և չենք հասցնում ժամանակին «ամրագրել» մեր զգացմունքները:

Ակներև է, որ այսպիսի ձևափոխությունների թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես մենք պատրաստ չէինք: Ու հենց այսպիսի իրավիճակներում է, որ կտրուկ մեծանում է հոգեկան «ցնցումների» հավանականությունը...

Մարդկային հարաբերությունների ֆիզիկական տարրի դուրս մղումը մեր իրականությունից հանգեցնում է մինչ այժմ գործող հարաբերությունների «պատուհանի» այնպիսի նեղացման, ուր մնացած ամեն բան լիարժեք չի տեղավորվում, ու մեզ կարող է թվալ թերի կամ անկատար: Հենց այստեղ է, որ այդ նույն, ոչ լիարժեքության ֆոնին, շատ հաճախ նույնիսկ մեզ համար անհասկանալի ձևով, ձևավորվում է «մեղքի զգացումի» համախտանիշն, ու կտրուկ նվազում է մեր ինքնիրացման գործակիցը:

Մենք, որ դարերով որդեգրել ենք մեր տեսակի հետ «առերեսվելով» ապրելու կեցությունը, այժմ հարկադրված ենք հարմարվել ավելի պասիվ մի մշակույթի, երբ դժվար է դառնում այլևս «ընդունել» դիմացինիդ էներգետիկ աուրայից քեզ փոխանցվող ազդակները, որոնք շատ կարևոր են հարաբերությունների ռեալ և ճիշտ գնահատման տեսանկյունից: Այսպիսի իրավիճակում մենք հայտնվում ենք և՛ զոհի, և՛ փրկչի դերում՝ բացառելով թե՛ զոհի, թե՛ փրկչի բացարձակ ընկալումն ուրիշների կողմից:

Սակայն բոլորս էլ հասկանում ենք, որ մարդկային հարաբերությունների «կազմակերպման» ընթացքը միշտ կարող է ունենալ չնախատեսված իրավիճակներ, որոնք շատ հաճախ կարող են սկզբունքորեն հակադրվել մեր գլխում նախապես գծած մոդելին կամ ծրագրած որոշումներին ու ցանկություններին: Այս համավարակի պայմաններում մեզանից պահանջվում է ֆիզիկական շփումներում լինել ավելի զուսպ, և, ինքնին հասկանալի է, որ մենք գիտակցաբար, բայց միևնույն ժամանակ ընդդիմանալով տարիների ընթացքում ձեռք բերած և արդեն իսկ կարծրացած պայմանական ռեֆլեքսներին՝ փոխում ենք մեր ներքին ազատության վեկտորի ուղղությունը՝ նախապատվությունը տալով մեզանից պահանջվող առավել պասիվ բնույթի հարաբերություններին...

Ամփոփելով՝ ուզում եմ ասել, որ մեզ մնում է տոկալ՝ չկորցնելու ամենաթանկը՝ Մեր Կողքի Մարդուն, և հուսալ, որ շատ շուտով ամեն բան իր տեղը կընկնի, ու մենք կվերադառնանք շփումների հին ձևաչափին...

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ ԱՌԻԹՈՎ ԵՎ ԱՆԱՌԻԹ

Սամվել ԿՈՍՅԱՆ - Ձեր խոստովանությունն է, որ եթե Հայաստանում ապրելը դժվար է, ապա առանց Հայաստանի՝ անտանելի... Փակագծերը կբացե՞ք:

Նորիկ ԼԵՎՈՆՅԱՆ - Ավելի լավ է՝ պատասխանելս չսկսեմ բաժակաճառի բառամթերքով: Մեր այս շքեղ ու երկնամերձ երկիրը փոքր է, ռեսուրսները՝ սահմանափակ: Ուստի՝ լավ ապրելու երազանքը ուրիշ ճանապարհային քարտեզ է բացում շատերի երևակայության մեջ, այն է՝ օտարության մեջ հարուստ ու բավարարված ապրելը հայրենիք է, իսկ հայրենիքում կարիքավոր ապրելը՝ օտարություն: Մեր երկրում կան գոհունակ ապրող ազգային փոքրամասնություններ, թե որն է իրենցից ավելի շատ քանակով, չգիտեմ, սակայն անժխտելի է, որ ամենամեծ փոքրամասնությունը, անկախ ազգությունից, աղքատներն են: Հույն գրող Կազանզակիսն ասել է. «Որտեղ հայերը շատ են, այնտեղ հրեան դժվարությամբ կապրի»: Ես ուզում եմ՝ մեր մասին ասվի, որ հայերն ամենուրեք լավ են ապրում, առավել ևս՝ Հայաստանում:

ԱՌԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՏԱՆԵԼԻ Է

Այս գրառումը կատարել եմ մի այլ երկրում մշտական բնակությունից հրաժարվելուց հետո, երբ ասացի տիկնոջս, որ մենք մեր դրախտը ստեղծել ենք այստեղ. ուր էլ գնանք ապրելու, մեր սերը կոդավորված է հայրենի հողի հետ, առանց Հայաստանի անտանելի է:

Ս. Կ. - Տարբեր են ստեղծագործողների հավակնությունները, բայց ճանաչված լինելու գայթակղությունը կարծես բոլորին է հատուկ: Որքանո՞վ են դափնիներն ու մրցանակները հետաքրքրում Ձեզ:

Ն. Լ. - Ճանաչված լինելու ցանկությունը արդարացված է, եթե ուղղորդվում է անսուտ արվեստ ստեղծելու պոտենցիալ կարողությամբ, սակայն այդ միտումը ոմանց մոտ մոլագարության ու ինքնահաստատման հիվանդագին ձգտման ախտանշաններ է առաջացնում: Սա ինքնին մերժելի է ու հոգնեցնող: Ստեղծագործելը ինքնին հավակնոտ մարտահրավեր է՝ իր սեփական եսը քննության նյութ դարձնելու համար: Իհարկե, դափնիներն ու մրցանակները հաճելի են, եթե տրվում են մնայուն արժեք ստեղծողին՝ որպես վաստակի գնահատանք: Սակայն ցավով ուզում եմ նշել, որ այդ մրցանակները երբեմն տրվում են լոբբինգի և կոնյունկտուրային կապերի շնորհիվ:

Ս. Կ. - Ինչո՞վ է պայմանավորված Ձեր նվիրվածությունը արաբական գրականությանը, որին հաճախ եք անդրադառնում:

Ն. Լ. - Դրա պատճառներից մեկը լեզվին տիրապետելն է և սերը՝ արաբական հարուստ ու բազմաբովանդակ գրականության, ինչպես նաև երախտագիտության դրսևորումը արաբ ժողովրդի հանդեպ, որ օգնության ձեռք մեկնեց և հյուրընկալեց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայերին: Իմ թարգմանություններով փորձել եմ խորացնել քսանդարյա բարեկամական ջերմ հարաբերությունները արաբ ժողովրդի հետ:

Ս. Կ. - Եթե հատընտիր հրատարակելու առաջարկ լինի, քանի՞ բանաստեղծություն կընտրեք և ինչո՞ւ հենց դրանք:

Ն. Լ. - Ճիշտն ասած՝ երբևէ չեմ մտածել հատընտիրի մասին: Հավանաբար կընտրեի ժամանակի շունչը պահպանած, ասելիքով առլեցուն և սուր իմաստային ենթաշերտեր պարունակող բանաստեղծությունները: Ես ինքնասիրահար տեսակին չեմ պատկանում, ընտրությունս խիստ կլիներ և հոգուտ ընթերցողի:

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ. *ԻՆ-ՅԱՆ-Ը ՅԱՆ-Ի* ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ, ԿԱՄ ՏՂԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Աղասի Այվազյանի արվեստի բազմազանության մեջ նրա անձի բազմաշերտությունն է նաև: Տարբեր տարիների ստեղծագործությունները փուլեր են՝ հոգու, տրամադրությունների, ինքնագիտակցման խուռներամ հորդացումների... Սրանք համակարգելը դժվարին խնդիր է, երբ գրողի հայացքից չի վրիպել կյանքի և ոչ մի մանրուք, երբ կարողացել է տարբեր հնարանքներով դրանցից բոլորովին այլ՝ մինչև այդ չեղած աշխարհներ սինթեզել: Այս նպատակով նույնիսկ իր սեփական բառամթերքն է ստեղծել կամ բառարաններից հանել գործածությունից դուրս եկած, իրեն այդ պահին անհրաժեշտ ատաղձը:

Ա. Այվազյանի լաբորատորիան աշխարհն է, իսկ միկրոսկոպը՝ իր ամենուրեք թափառող ու տրոփող, ճառագայթահարումով տրոհող ու դեպի «խորքի խորությունը» դեգերող հայացքը: Նա համոզված էր, որ իրեն է վերապահված կյանքի՝ իր դիտարկած երևույթներին նոր անուններ տալու, դրանք նոր հերձումների ենթարկելու առաքելությունը:

Դեռևս անհասկանալի, անբացատրելի է մնում, թե ինչպե՞ս է, որ տղամարդկային էության մեջ թափանցելու նրա գիտականության հասնող զորությունը, այր մարդու բազմաթիվ ու բազմատեսակ, լիարյուն կերպարներ արարելու նրա թունդ վրձնահարվածներն ու գուներանգները նույն ուժով չեն տարածվում իգական սեռի վրա: Գուցե սա գրողի մեջ հստակորեն ու շատ որոշակի արտահայտված կանացի և տղամարդկային սկիզբների՝ ***ինի*** և ***յանի*** միահյուսված առկայությո՞ւնն է: Եվ այս միաձույլ լինե՞լն է արդյոք պատճառը, որ ***յանի*** վրա կենտրոնանալով՝ ինքնըստինքյան երևակվում են նաև ***ինի*** պարադոքսները:

Ինի առկայությունը կարելի է տեսնել նրա այր կերպարներից գրեթե յուրաքանչյուրում: Մարտիրոսը («Սինյոր Մարտիրոսի արկածները»), Միրզա Ասատուր Խանը («Ավետարան ըստ Հավլաբարի»), Բոգդանը («Աղի Կոմսը»), Գրիգորը («Թիֆլիսի ցուցանակները»), Արմինուսը («Արմինուս») և շատ շատերը Այվազյանի տղամարդ կերպարներից միաձույլ են կամ միաձուլվում են իրենց ճանապարհին հանդիպած կանանց... Ու կարծես կինը, այս ամբողջության ինքնըստինքյան հասկանալի մասը լինելով, կատարում է իր երկու առաքելություններից միայն մեկը՝ կա՛մ մարմին, կիրք հարուցող բաղադրիչ՝ Բերյաշը («Աղի կոմսը»), Սասեն («Արմինուս»), Կորնելիան («Սինյոր Մարտիրոսի արկածները»)... կա՛մ մայր՝ Գարանը («Սովորական մարդու գինը»), Մաշոն («Թիֆլիս»), որ ճակատագրի բերումով առանց կնանալու՝ պետք է անտրտունջ մայրություն աներ իր քույրերի թողած անհասկանալի, անորոշ շառավիղներին, և, իհարկե, Շուշանիկը («Ուղեցույց Թիֆլիս քաղաքի, 1912 թվական»), որի մայրանալուց անմարմին հոգիներ էին ծնվում, երջանկացնում իրենց մորը և բոլոր նրանց, ովքեր «ходи по пальцам» ուղղությամբ գնալով՝ կգտնեին երջանկության բանաձևը, Շուշանը՝ համանուն վիպակի հերոսուհին, որ որոշել էր անպայման գտնել «հայոց երջանկության» բանալին, որ էր ընտանիքը:

Եթե հիշյալ այր հերոսների մեջ տեսանելի է կանացի և տղամարդկային սկիզբների առկայությունը, ապա Աղասու ստեղծած կերպարների մի ամբողջ շարքի մեջ գրեթե բացակայում է կանացի սկիզբը... Անգամ նրանց բջիջը իրենց մեջ հասունացնող մայրերը գրեթե չեն հիշատակվում կամ պատումի լուսանցքներում են:

Աղի Կոմսի՝ նույն Իսայ Ակիմիչի փառատենչ, հուժկու, գործարար մարդու կյանքում կինը՝ որպես մարմին, բացակայում է: Նրա մեջ չկա ***յանի*** վեհ, հերոսական, լուսավոր, կնամեծար արտահայտվածությունը: Իսկ կնոջ մարմինը՝ որպես երջանկության աղբյուր, թողնված էր նրա որդու՝ Բոգդանի վայելումին: Ե՛վ հայրը, և՛ որդին, բացի ազգային արմատներից կտրված լինելուց, նաև այս առումով են ողբերգական: Երկուսի դեպքում էլ բացակայում է կշեռքի մյուս նժարը:

Քանի որ ասվածի խտացումը կարելի է գտնել «Երկրի վրայի զբաղմունքը» գրքում, արժե սա ընդունել որպես ասվածի հաստատում, և այն անվանել «տղամարդկային խոսակցություն»: Այստեղ փոխվում է Ա. Այվազյանի ամբողջ գեղագիտությունը... Նրա այս կերպարներն ամենևին չեն մտածում իրենց խոսքի ու գործողությունների անթույլատրելիության, էլ չենք ասում՝ անբարո լինելու մասին: Հաճախ բռի, գռեհկաբան տղամարդիկ են... Ուրիշ ի՞նչ կերպ պետք է մարմնավորվեին Բերիան, Ստալինը և ստալինյան մսաղացի անիվը պտտողները կամ դրա միջով անցնողները: Այստեղ կանայք միայն մարմին են՝ հոգու լույսը կորցրած կամ առհասարակ չունեցող:

«Կյանքի գրկում» պատմվածքի հերոսը՝ Ժորան, ճշգրիտ, ընդհանրական պատկերն է ստալինյան-բերիական համակարգի սնուցած, աճեցրած, պարարտացրած, «տակիչքից» (Ա. Այվազյանի գործերում շատ հանդիպող բառերից մեկն է) մակերես ելածների: Նա, որ այստեղ Լաչինով ազգանունն է կրում, մի անգամ էլ նույն անունով, կյանքի նույն այլասերված սկզբունքներով մի այլ ժամանակահատվածում է մակերեսում երևալու՝ «Ժորա Կարկատանովի մարմինն ու հոգին» վիպակում, այս անգամ՝ Ներսիկովիչ, ազգանունն էլ՝ Կարկատանով:

Ժորա Լաչինովի ինքնաբացահայտումները, որ անում է առաջին դեմքով հանդես եկող հերոսի առաջ՝ Ստալինի մահվանն անմիջապես հաջորդած շրջանում, ահասարսուռ են: Ստացվում է՝ մարդը ապրել, շնչել, աշխատել, սիրել է անտեսանելի լուսարձակների տակ գտնվող մի «տակիչք» աշխարհում, որտեղ ինքը զրկված է եղել սեփական կամքից, առանց իմանալու, որպես խամաճիկ, տարուբերվել է միայն ըստ ուրիշների՝ չարագործների, ամեն տեսակի նսեմ ուժերի քշած ուղղությամբ:

Այս գրքում հանդիպում ենք դարի խտացումը հանդիսացող այլ կերպարների հետահայաց պատմություններին... Այստեղ է, որ Ա. Այվազյանը հոգեվերլուծողի բնածին հետաքրքրասիրությամբ կիրառում է խոստովանանքի հնարքը: Սա մի դաշտ է, որում հերոսին ապաշխարելու մի վերջին հնարավորություն է տրվում: Հոգեվերլուծողը, սակայն, նրա համար փրկություն չտեսնելով, նրան հանձնում է վիրաբույժի նշտարին: Սա էլ իր հերթին վիրահատական սեղանին է թողնում նրան՝ խորշելով իր տեսածից...

Այսպես է նաև Ժորա Կարկատանովը, որ ժամանակագրորեն ավելի ուշ շրջանի արտահայտություն է: Ըստ իս՝ Ա. Այվազյանի մահվանից հետո հրատարակված այս վիպակի, նաև ամբողջ գրքի պարունակությունը դեռ վաղեմության ժամկետ ուներ անցնելու, եթե չասենք, որ հեղինակը բավական աշխատանք ուներ վիպակի գեղագիտությունը հղկելու ուղղությամբ, որ չհասցրեց անել: Այստեղ կան կերպարներ, որոնց նշանավոր նախատիպերը դեռ թարմ են ժամանակակիցների հիշողության մեջ, և անգամ գրեթե չեն ծածկագրված նրանց անունները: Մի՞թե սա այն նույն ժամանակաշրջանն է, որի մասին Այվազյանը խոսում է՝ այլևայլ գեղարվեստական հնարանքներով մեղմացնելով իր և իր ժամանակի ցավը: Մի՞թե նա՛ չի գրել «Օբյեկտիվ-18»-ը՝ նույն կինոաշխարհի մասին, որտեղ հորդում է հումորը, հանդուրժողականությունը, որտեղ ցավը ծիծաղ է դառնում, ծիծաղը՝ հեգնանք, բայց ո՛չ դառնություն ու քինախնդրություն:

Չէ՞ որ ընդամենը երկու տարի առաջ էր նա գրել «Եղած չեղածը՝ մի կյանք» ինքնակենսագրական վեպը: Այստեղ էր, որ նրա հակակշիռ, երկվորյակ կերպար դարձած «Գեղարվեստական խառնվածքը» տեղն էր գցում դաժան, զգայուն ու չարչարված կյանքի բոլոր անկյունադարձերը...

«Երկրի վրայի կյանքը» ժողովածուում տեսնում ենք ***յանին*** գրեթե առանց ***ինի***: Այստեղ Ստալին-Կոբայի դաժան, սահմռկեցնող, ոխակալ ներկայությունն է՝ իր սկզբնավորումից սկսյալ («Կոբա, Կամո», «Հասարակ մարդը», «Երկրի վրայի զբաղմունքը»): Գուրջիևի հայացքը հայտնաբերում է իր դասախոսությանը ներկա, բայց իրականում բացակա Կոբային... «Սահմանափակ գավառցի... Նրան չէր խանգարի մի քիչ գաղափար ունենալ գոնե մարդկային փոխհարաբերությունների մանրամասների վերաբերյալ, որոնցից հյուսված է կեցությունը, և որոնցով պայմանավորված է ամեն տեսակի գործունեություն...»: Սակայն Ստալինի հետագա գործողությունները, աշխարհին նայելու նրա հրեշավորությունը որևէ կապ չունեին գուրջիևյան այս միամիտ մեկնաբանության հետ... Անսահման նողկանքը Ստալինի, Լենինի, Բերիայի հանդեպ նստած էր Ա. Այվազյանի մեջ: Նա էլ Կամոյի, Բերիայի ու Ստալինի պես Քռի ջուրն էր խմել և նույնպես յուրահատուկ էր՝ որպես անհատականություն, բայց Ստալինը տանջելու էր Աղասու միտքը՝ մինչև ծերություն... Նրա նկարչության մեջ էլ իր տեղը գտավ Ստալինի կերպարը...

Տղամարդկանց մի ճոխ պատկերասրահ է «Ուստի՞ գասը»՝ իր հոգեբանական գյուտերով: Ահա սառնասրտորեն ոստիկանի իր մասնագիտական պարտքը կատարող Թոռնիկին բնորոշող մի նախադասություն. «Թեպետ նրա միտքը դուրսն էր՝ Ալեքսանդրի կողմը, բայց նրա մեջ արդեն հասունացել էր հարգանքը իր համեստության նկատմամբ, որը ձեռք էր բերվել ինքնավստահությունից ու գործնական հաջողակությունից...»: Այս հակիրճ տողերում Թոռնիկի հոգեբանական կերտվածքի ամբողջական պատկերն է: Նա հասկացել էր, որ իր կատարած գործերով գլխապտույտ փառքին տրվելը նույնիսկ սեփական աչքում կիջեցնի իր վարկանիշը... Սա նաև մեծագործությունների, փառքի, կյանքի ունայնության աստվածաշնչյան տեսություններից եկող վարքագիծ է: Եվ Թոռնիկի հարգանքն իր իսկ համեստության հանդեպ՝ հարգանքի տուրք է առհասարակ մարդկային այս տեսակին. Թոռնիկը բնազդորեն գիտի, որ ինքնավստահությունն ու հաջողակությունը գալիս են մի այլ տեղից: Նրա հարգանքը այդ անորոշ ուժի հանդեպ էր և որոշիչ էր ըստ ամենայնի: Թե՛ ոճրագործ Ալեքսանդրի, թե՛ Թոռնիկի մեջ գրեթե չի նշմարվում կանացի սկիզբը:

Թեև Տատան է այս վիպակի գլխավոր հերոսուհին, բայց նրա գործողություններին մեջ ավելի շատ է ***յանը***, քան ***ինը***... Իր ճանապարհին պատահականորեն հանդիպող տղամարդկանց հետ նա հարաբերվում է նույն կերպ, ինչպես իրենց մեջ կանացի սկիզբ չունեցող տղամարդիկ կհարաբերվեին իրենց ձեռքի տակ ընկած էգի հետ: Նրա գրեթե բոլոր զուգընկերները ոչնչության արժեք ունեն իր համար: Նրանցից Դոնն, որ մարդասպան էր ի ծնե, միակն է այս պատկերասրահում, որ Տատային ինչ-որ պատկառանք է ներշնչում: Նրա կատարածը ընդամենը մի քայլ էր՝ «Բելի Դուխանում» Տատայի հետ նստած «կարճ ու փոքր», «գլուխը սափրած մարդը, բերանը արյունելով, ծամում էր ապակե բաժակը: «Հետո Դոնն շատ հասարակ դուրս եկավ, դրսում սպանեց մարմնեղ մի մարդու, նույնքան հանգիստ վերադարձավ ու մոռացավ կատարվածը»: Այս դեպքը ինքնագիտակցության մղեց Տատային: Ուրեմն՝ սպանելը առանձնապես մեծ նշանակություն չունի իր նման մեկի կյանքում: Առանց կարևորություն տալու՝ նա մասնակցել էր իր որդի Ալեքսանդրի՝ բառի բուն իմաստով «գայլի սիրտ ուտելու» արարողությանը: Նույն սառնասրտությամբ նա նայում էր իր որդու ոճրագործություններին և անտարբերությամբ էր լսում նրա վերջին խոստովանությունը: «Ի վերջո՝ Տատային զարմացնել շատ դժվար էր, ուղղակի որդին էր իրեն հետաքրքրում»: Այս պարագայում ոճիր ոճիրի ետևից գործած ու դրանց մասին մոր հետ իր մտորումներով կյանքում միակ անգամը կիսվելու կարիք ունեցող մարդու մեջ ավելի շատ է կանացի սկիզբը, քան Տատայի:

Ա. Այվազյանի տղամարդկային խոսակցությունը մարդու կյանքի հենց այն պահերի մասին է, երբ սխալ կառուցված հարթակը ծառայում է տակիչքի հավակնություններին: Այստեղ է, որ խոսք է բացվում հանրությանը, հայ հանրությանը վերստին քաղաքակրթելու մասին... Չէ՞ որ հենց այդ բերիական, ստալինյանի հարթակի պայմաններում էր, որ Հայաստան եկավ Ալեքսանդր Թամանյանը. ամեն ինչից բարձր դասեց իր ՀԱՅՐԵՆԻՔԻ շահը... Ապրեց և զոհվեց՝ իր ժողովրդին ավելի մեծ, ավելի բարձր ու վսեմ մի հարթակ նվիրաբերելու առաքելությունը կատարած:

Նա էլ դարձավ Ա. Այվազյանի՝ 2002 թվականին լույս տեսած մեծ ստեղծագործության հերոսը («Պոեմ վասն շենքի և շինության»), որի մեջ տղամարդկային սկիզբը իր բարձունքի վրա է՝ ***ինի*** և ***յանի*** հանճարեղ միակերպություն:

Զուր չէ, որ այս վեպի գործած տպավորությունների շարքում պայծառ շողացող աստղի նշանակություն ունի այն պատկերը, երբ նոր միայն Երևան ժամանած Թամանյանը ձգում է իր ձիու սանձերը, տեսնում է՝ «Փլվող պատի տակ, որը պահվում էր երկու փտած հենապյուների օգնությամբ, գեղեցկուհի մի էակ կրծքով

Շարունակությունը՝ էջ 4

Էդվարդ ՄԻԼԻՏՈՆՅԱՆ

ՕՐԵՐ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ

Այդ ինչպե՞ս անցար պարիսպը Չինական,
Չոքեցիր դռանը, ներս մտար անգամ
Եվ հոգիները խառնեցիր մոլագար,
Հակահիգիենիկ վարքով խուլիգան:

Հազ ու փռշտոց, դիմակ ու ալկոգել,
Վալպուրգյան գիշերն է ասես բեմ ելել,
Եվ հետո Իրան, Իտալիա, աշխարհ՝
Համաճարակի խոլապար ու մահ:

Դժվար է արագ հավատալ մահազդի,
Նույնիսկ կատակ է թվում հարազատի,
Խուճա՛պ, գիտեինք՝ անցյալում ես խոր,
Հառնել ես մեր դեմ հանդերձով մի նոր:

Եվ ցուցանում ես մարմինդ բացիլ,
Ոնց շառագունած այգ լուսաբացի,
Տե՛ր, մանրէներդ մեր հոգին կերան,
Ո՛չ երևում են, ո՛չ ունեն բերան:

Երկրներն ամեն էս ոչնչի դեմ
Կանգնել են շվար, ելքը չգիտեն,
Երկի հիմա ուժգին փռշտանք,
Վարակն աստղերի կրակներին տանք:

Հե՜յ, հոխորտանքի գիտության տաճա՛ր,
Տեսքդ շքեղ է, միջուկդ՝ անճար,
Լավ է՝ քեզ դիմեմ, մայրի՛կ իմ հեքիմ,
Քո մութ աշխարհքից աղոթի՛ր կրկին:

Մեղմ մրմնջոցով կապկպիր չարին,
Ապա հորանջիր՝ իբրև վերջ բարի,
Թող քեզ միանա Ամերիկան ողջ՝
Իր նախագահի շեշտով բարձրագոչ:

Նաև ամենքը՝ զորությամբ համայն,
Ոգեն նախնական ԲԱՆԸ զանգածայն:
Գարուն է, ծաղկած նշենիս վստահ
Ասաց՝ պի՛նդ կացեք, ես ձեզ նուշ կտամ:

ՊԱՐՏԵԶ

Իջա պարտեզ՝
Ծառերի հետ խոսելու,
Թռչուններն էլ մեջ ընկան,
Մրջյուններն էլ՝ մի կողմից:
Հասկացա, որ ջրելու
Ժամանակն է ուշացել:

Լուռ էին, լուռ
Ծառ ու թռչուն ու մրջյուն,
Ի՞նչ գիտեին, համավարա՛կ,
Քո մասին:
Ո՞վ էր ասել:

Բոլորն իրար հետ խոսելու
Մի լեզու ունեն,
Դա խոսք չէ,
Լռակյաց, տոչոր
Սեր է:

ՊԻՂԱՏՈՄՆ ՈՒ...

Պիղատոսը գործը արած համարեց
Եվ ձեռքերը լվաց,
Սրբեց խավոտ սրբիչով
Ու նստեց սեղան:

Հանկարծ ճաշի գոլորշու հետ
Ջերմություն զգաց,
Մտածեց՝ կանցնի: Չանցավ:
Տեստավորեցին: Դրական արդյունք՝

Կորոնավիրուս 19:

Գիտնականները գլուխ գլխի տված՝
Փորձեցին գտնել պատճառը՝
Ախր, այդքան դար առաջ,
Ախր, մշտապես լվացվող Պիղատոս,
Եվ հանկարծ՝ Քովիդ 19:

Երկնքում ճայթած կայծակի հետ
Մեկը գոռաց՝ գտա՜, գտա՜,
Օճառով չի լվացվել,
Արագ է լվացվել,
Սրբիչ տվողն էլ
Սոցիալական հեռավորություն չի պահպանել:
Վերջ:

Պիղատոսը մահացավ ու քանի որ
Մահացու վիրուսից էր վախճանվել,
Թաղեցին մի անհայտ տեղ:

ՀՈՒԴԱՆ ՈՒ...

Խորհրդավոր ընթրիքին
Բոլորը եկել էին
Ներսից ու դրսից բաց դեմքերով
Միայն...
Նրա դիմակը ներսից էր՝
Հիսուսին տեսանելի:

Այդպես էր տրված նրան՝
Շոշափել ապագան, անտեսանելին,
Անգամ գամերով խաչված՝
Հարության տեսիլքը աչքերում:

Իսկ այն Հուդան տեստավորվեց
Ու...
Ինքնամեկուսացվեց,
Ինքնասպան եղավ,
Եվ կախվածից շրխկալեն ընկավ դիմակը:

ՊԵՏՐՈՍՆ ՈՒ...

Ըստ որոշ գիտնականների՝
Չղջիկներից է տարածվել
Թագավարակի բացիլը:
Պետրոսն ավելացրեց՝
Նաև՝ աքաղաղից,
Այն մեկից, որ դեռ երեք անգամ չկանչեց:
Եթե նա չլիներ,
Ոչ մի տեստ չէր բացահայտի
Ուրացման վարակը:

Հազարա՛ն բլբուլ, պայքարիր
Այս վտանգավոր թռչունների դեմ,
Մարդիկ զբաղված են քո մասին հեքիաթ գրելով:

ՍԵՂԱՆ

Իմ սեղանին՝ ալկոգել,
Իմ սեղանին՝ ալկոհոլ,
Ժամանակն է պտտվում,
Ոնց ծեր դերվիշ կամ նոր հոլ:

Իմ սեղանին՝ ծաղիկներ,
Իմ սեղանին՝ ճեղքած նուռ,
Համավարա՛կ, քո առջև
Մարդը բաց է հանց մատուռ:

Իմ սեղանին՝ հին գրքեր,
Իմ սեղանին՝ մի նոր գիր,
Վախն աղոթքից կարկամեց,
Ասենք՝ մեզ հետ դու երգի՛ր:

ԿՈՎԻԴ 19

Քայլում են մարդիկ
Լուրջ և դիմակով,
Եվ դեմս կտրեց
Դիմակով մի կով:

Գյուղո՞ւմ եմ հիմա,
Թե՞ քաղաքում,
Գուցե երազ է,
Որ տեսա անքուն:

Կովն ինձ նայեց մեղմ
Ու հետո մզզաց.
- Ամոթ չէ մեկ-մեկ
Նմանվել մարդկանց:

* * *

Փրկիչները շատացել են,
Փրկվողները, ցավոք, ո՛չ,
Փրկվողները գուցե փրկեն
Փրկիչներին ինքնակոչ:

Փրկիչ-փրկվող նույնացել են,
Արդյունքում՝ էլ չկա մարդ,
Համավարակն էլ՝ չար, անզեն,
Կոտորում է անընդհատ:

- Հիմա ես եմ փրկիչը ձեր,-
Հանկարծ գոռաց վարակն այդ,-
Ձեզ ձեզանից ես կազատեմ,
Որ իրար միս չուտեք արդ:

Փրկիչները զայրացան խիստ,
Փրկվողները՝ առավել,
Եվ վարակին քշեցին բիրտ,
Ձեռքներին՝ մի ցախավել:

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ. *ԻՆ-ՅԱՆ-Ը ՅԱՆ-Ի* ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ, ԿԱՄ ՏՂԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՍԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ էջ 3

կերակրում էր երեխային: Թամանյանը անակնկալի եկավ, ժամանակ չունեցավ հասկանալու երևույթը, այնքա՜ն չքնաղ էր, այնքան անսովոր մանկամարդ մոր դրսևորույթը, որ կոշկախթանները անխնա խրելով ձիու որովայնը, անէացավ այդ տեսիլքի առջև: Այս հրեշտակակարգ էակը ևս հին, ազնվական Հայաստանից էր հասել այստեղ: Նման գեղեցկության Թամանյանը մեկ էլ հանդիպել էր Ֆլորենցիայում... Ուզեց հիշել՝ այն իտալուհին կի՞ն էր, թե՞ պատկերասրահում տեսած նկար... Չհիշեց, վասնզի հայուհին ևս հողածին չէր... Աստվա՜ծ իմ... Քեզ հետ մրցել անհնար է: Ի՞նչ պիտի ձեռամբ արարեմ այս տեղանքում, որ համապատասխանի քո երկնած այս հայուհուն...»:

Իսկ վարչապետի հարցին. «Շա՞տ եք հիասթափված, Ալեքսանդր Իվանովիչ»,- պատասխանում է. «...Հիասթափվա՞ծ... Ո՛չ, իհարկե... Վերջապես կա հող... Կա տեղանք, որ կոչվում է Հայաստան... Կա հրաշագեղ կին այդ հողի վրա, և եթե այդ հողը համապատասխանի իմ տեսած գեղեցկուհուն, ապա մեր քաղաքը պիտի լավագույնը լինի աշխարհում...»:

Խոսքն այս խոհապատումի մեջ տղամարդկային սկզբի մասին պետք է լիներ, որը վեհանձն է, հերոսական, կնամեծար, թեկուզև փառատենչ, բայց ավելի շատ խոսվեց կյանքի որոշակի փուլերում տակիչքի մակերևույթ ելնելու մասին: Երբ յանը փորձում է առանց ինի ղեկավարել աշխարհը՝ ինին միայն որպես առարկա դիտարկելով, ամենայն լուսավորը, վեհը խորհրդանշող ***յանը*** թևաթափ է լինում առանց կանացի բնազդական մտքի: Իսկ ***ինն*** էլ այս ընթացքում՝ առանց ***յանի,*** իր սառը, բացասական լիցքերը կուտակելով՝ մահացնում է ամեն ինչ:

Ինի և յանի ավանդական հակադիր ըմբռնման մասին գրեթե բառացի խոսվում է Ա. Այվազյանի «Խոսրովադուխտ» պատմվածքում. «Տրդատը շատ ուժեղ էր,- բացատրում է թագավորի հին զինվոր Գորգը,- բայց նա չգիտեր իր ցանկության և կարողության կազմությունը: Ճերմակը սևով է ճերմակ, սևը ճերմակով է սև»:

Կապելով խնդիրը ոչ միայն բոլոր ժամանակներում դրսևորված, այլ նաև մեր այսօրվա կյանքի բարդության հետ՝ տեսնում ենք, որ Ա. Այվազյանը մեկ անգամ ևս ցուցանում է՝ մարդու մեջ առանց ***յանի ու ինի*** համակեցության ավերվում է այն ամեն լավը, որ մարդն ստեղծել է իր գոյության փորձով: Երբ ստեղծված չէ կամ տակնուվրա է եղել հասարակության քաղաքակիրթ վարքի հարթակը, երբ բարոյական արժեքները գրեթե ծննդյան օրից աղավաղված դասերով են սնուցվել երեխային, ամենահարմար պահը որսալով՝ տակիչք-առնետները, խավարասերները դուրս են սողում թաքստոցներից: Երբ անընդհատ քարոզվում է դիմակներ կրել, հանգամանքները չարարկող ուժերը անհապաղ ինքնադիմակազերծվում են: Եվ երբ ***յանը*** կամ ***ինը***՝ առանց մեկմեկու, կարծում են, թե ահա հիմա իրենց ժամն է, և փորձում են հաղթարշավել, պարտվում է կյանքի հավասարակշիռ ընթացքը: Իսկ առաջադիմությունը կամ կանգ է առնում, ճահճանում է կամ էլի նահանջի տառապալից ճանապարհ ունի անցնելու՝ բազում կյանքերի ու նվաճումների փոշիացման և ապա՝ մի նոր հառնումի անորոշ, երկա՜ր ճանապարհ...



Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

Մեր օրերից մեկը

Ինձ համար նստած ֆեյսբուք եմ թերթում, հիանում եմ Սամվել Սևադայի լուսանկարներով, «Լուսավոր Հայաստանի» չորս գաղտնի-

ների գաղտնազերծման կամքով, նախանձում եմ Արմեն Շեկոյանին՝ առաջին մրցանակ ստանալու համար, ու մեկ էլ՝ դուռս թակում են: Այնքան անսպասելի, որ թվաց, թե հաշվիչ ստուգողն է:

- Ո՞վ է,- ակամա հարցրի ես:

- Լավ ապրելու Հույսն եմ,- պատասխանեց:

- Ա՛յ Հույս, ես քեզ չասի՞, որ էլ չերևաս:

- Դուռը բաց, ներս գամ,- ասում է:

- Չե՛մ բացի: Գալիս ես ու կտրում իրականությունից: Անցած օրը քո խելքին ընկա, էլի վարկ վերցրի: Ո՞նց եմ փակելու...

- Էս ցրտին ո՞ւր գնամ,- լացակումեց,- բոլորդ հերթով ինձ լքում եք... Քանի հազար մարդ երես թեքեց ինձանից, արտագաղթեց... Ե՞ս ուր գնամ...

- Գրողի ծոցը գնա,- բարկացա ես,- որ մնացել ես, ի՞նչ օգուտ ես տալիս, բացի վնասից: Քո տեղը միայն իշխանավորների ճառերում է:

- Շատ չեմ մնա,- խնդրում է,- մի քիչ տաքանամ, մի կտոր բան ուտեմ... ոտքերս հազիվ եմ քարշ տալիս: Մի մահ էլ չկա՝ մեռնեմ, պրծնեմ:

- Դու մեռնող պտուղը չես, արդեն քանի տարի է՝ դա ես ասում, որ խղճահարվենք:

- Ես մեղավո՞ր եմ, որ վերջինն եմ մեռնելու, այդպես է կանխորոշված:

- Տո՛ գնա գործիդ, է՜... Քո ապրելով քանիսի՞ գլուխը կերար, մարդասպա՛ն:

- Շեմիդ կմեռնեմ, սրտիդ դարդ կմնա...

- Թե երեկ մեռնեիր, էսօր երկրորդ օրը կլիներ, գոնե կիմանայինք մեր անելիքը:

- Բա հիմի ի՞նչ անեմ...

- Գնա, Կիևյանից գցվիր:

- Իշխանությունները չեն թողնում:

- Բա՛ց թող էդ իշխանությունների փեշը, միացիր ընդդիմադիրներին:

- Էդ էլ փորձեցի, բան չստացվեց, ժողովրդի առջև չարդարացրին ինձ:

- Նորանշանակ վարչապետի մոտ գնա:

- Գնացել եմ: Հետ ուղարկեց, ասում է՝ 2025 թվին կգաս... Ներս թող...

- Չես համոզի: Վե՛րջ: Конец! End! Քյաստը՛մ:

Ոտքերը քստքստացնելով՝ թողեց, գնաց:

Շարունակեցի ֆեյսբուքս նայել, մեկ էլ էլի՝ դռան թակոց:

- Ո՞վ է:

- Հարևա՛նդ:

Դուռը բացեցի, ներս չմտավ, շեմին կանգնեց:

- Առաջ արի:

- Չէ՛, խնդրանք ունեմ: Աշոտս Ռուսաստանից զանգեց, ասում է՝ մի քիչ էլ համբերի, փող կուղարկեմ, տոմս կառնես ու կգաս: Թե ձեռքիդ կա, մի 1000 դրամ տուր, հաց առնեմ, մինչև որ...

- Քիչ առաջ քո դուռը թակե՞լ են,- ընդհատեցի ես:

- Հա՛, լավ ապրելու Հույսն էր եկել... սոված, մրսած: Թե ձեռքիդ կա, մի 1000 դրամ տուր, հաց առնեմ, մինչև որ...

ԾՈՒՏԱՍԵԼՈՒԿ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հարկադիր պարապուրդից օգտվելով՝ ասի գնամ սահմանամերձ N գյուղ՝ ընկերոջս տեսնելու: Գիտեի, որ գյուղի դպրոցում լեզու ու գրականություն է դասավանդում ու շրջանում հայտնի է իր կիրառած արդիական ու ինքնատիպ մեթոդներով: Երբ վերջապես հասա, արդեն իրիկուն էր: Նստած էր նոթբուքի առաջ ու հոգնած աչքերն էր տրորում:

- Բարով տեսանք, էդ ի՞նչ բանի ես:

- Հազար բարի: Հեռավար դաս եմ անցկացնում, նստիր՝ հիմա կվերջացնեմ:

- Բա ինչո՞ւ ես էդքան հոգնած ու տանջված:

- Շատ կարևոր առաջադրանք էի տվել, սպասում եմ մի խելքը գլխին պատասխանի, բայց ընդամենը մի քանի ապուշ բան են ուղարկել: Հազար անգամ էլ բացատրեցի, որ էս դասից է կախված սերունդների բախտը:

- Ինչի՞ մասին է դասդ:

- Ասացվածքների:

- Լավ թեմա է, բայց ի՞նչ կապ ունեն սերունդները:

- Դե, առավոտից բացատրել եմ, որ մեր ժողովուրդը տարբեր կենդանիների ու թռչունների մասին հազար ու մի ասացվածք է ստեղծել, որ մենք սովորենք ու իմանանք ամեն կենդանու բնույթը: Բայց արի ու տես, որ չղջիկի մասին ոչ մի ասացվածք չունենք: Դա մեր միամիտ պապերի թերացումն է: Էսօր չղջիկը ամենամեծ զուլումն է, ու դրա մասին ասացվածք ստեղծելու պատասխանատվությունը ընկել է մեր ուսերին: Եթե էսօր չստեղծենք, վաղը արդեն ուշ կլինի, ու սերունդները մեզ չեն ների:

- Արդեն կա՞ն պատասխաններ:

- Ասացի, չէ՞, մի քանի ապուշ բան:

- Օրինա՛կ:

- Խնդրեմ, տես՝ ինչ է գրել էս մեկը. «Չղջիկը ծառից հեռու չի ընկնի»:

- Էդ ոնց որ մի տեղ լսել եմ: Հլը մյուսը կարդա:

- «Չղջիկը յոթ երգ գիտի, յոթն էլ՝ մեղրի մասին»:

- Էդ էլ էն չի:

- Բա էս մեկը լսի. «Չղջիկի գլխին ավետարան են կարդում, ասում ա՝ շուտ արեք, ոչխարը սարն անց կացավ»:

- Դա էլ հարմար չի՞:

- Չէ՛: Էս էրեխու հերը գյուղի չոբանն ա, դրա ուշք ու միտքը ոչխարն ա ու սարերը:

- Էլ տարբերակ չկա՞:

- Մնաց մի հատ:

- Դե կարդա:

- «Խելոք չղջիկը տասնչորս ծիծ ա ուտում»:

- Բայց ինչի՞ տասնչորս:

- Դե, չոբանի թվաբանություն ա: Հիշել ա, որ խելոք գառը յոթ մոր ծիծ ա ուտում, բազմապատկել ա երկուսով ու...

- Էլ չկա՞:

- Չէ՛, սպասում եմ, որ մի հատ էլ ասեն:

- Բայց էդ վերջինը ոնց որ հարմար ա, չէ՞:

- Սրա ի՞նչն ա հարմար: Չղջիկը էսօր աշխարի ա ուտում, ի՞նչ տասնչորս ծիծ: Եթե տասնչորս ըլներ, դրանց տերերին կմեկուսացնեին ու կպրծնեին: Սպասի դուռը բացեմ, ոնց որ ծեծում են:

Այդ պահին մի կարմրաթուշ տղա ներս ընկավ:

- Ընկե՛ր Գառնիկ, հերս ասեց՝ էլ չղջիկով բան չեմ կարում հնարեմ: Բայց մի հատ լավ շուտասելուկ հնարեց:

- Շուտասելո՞ւկ:

- Հա՛:

- Դա էլ կարևոր բան ա, բա ինչի՞ պլանշետով չուղարկեցիր:

- Հերս հոգնած էր, պլանշետը ձեռիցս առավ, որ նարդի խաղա:

- Էդ շուտասելուկը հիշո՞ւմ ես:

- Հա՛:

- Հլը ասա:

- Աղջիկը լոճեց չղջիկ,
Մի խղճուկ չղջիկ լոճեց,
Գեղջուկը լոճեց աղջիկ,
Որ խղճուկ չղջիկ լոճեց:

- Ոնց որ լավն էր, ապրի հորդ արևը: Հլը մի հատ էլ դանդաղ ասա:

- Դանդաղ չեմ կարողանում:

- Խի՞ չես կարողանում:

- Որովհետև շուտասելուկ ա:

- Լավ, գնա՛, բայց հորդ ասա, որ էս հեռավար դաս ա, թող անպայման պլանշետով ուղարկի:

Երբ երեխային ճանապարհեց, դարձավ ինձ.

- Լավ շուտասելուկ էր, չէ՞:

- Տպավորիչ էր, բայց սերունդները դրանով կզգա՞ն չղջիկի զուլումը:

- Ինձ թվում ա՝ արդեն զգում են:

- Քանի՞ աշակերտ ունես:

- Գյուղում երկու աշակերտ կա, բայց մեկը հոր հետ գնացել ա շրջկենտրոն, էս մեկի հետ եմ պարապում:

- Հեռո՞ւ է ապրում:

- Մի տուն էն կողմ:

- Բա էլ ինչի՞ ես չարչարում, կանչի տուն, մարդավարի պարապի, էլի:

- Չի կարելի, բա չղջիկի զուլո՞ւմը: Մարզպետարանից հրաման կա՝ մենակ հեռավար ուսուցում:

Չկա չարիք առանց բարիք

«Չկա չարիք առանց բարիք» կամ «թաքնված օրհնություն» ասույթը, որը չինարեն հնչում է որպես՝ «Սայ Վընն շը մա, յէն ճը ֆեյ ֆու»[1] (sài wēng shī mǎ, yān zhī fēi fú/ 塞翁失马，焉知非福), Չինաստանում շատ վաղուց արդեն դարձել է ամենատարածված և ամենասիրված ասույթներից մեկը: Բառացի այն թարգմանվում է «Ծեր մարդը կորցնում է ձին, արդյոք դա օրհնություն չէ՞»: Ավելի երկար տարբերակը հնչում է այսպես՝ «Ձիուց զրկվելը ոչ միշտ է չարիք, ձի ձեռք բերելը՝ ոչ միշտ բարիք» (塞翁失马焉知非福，塞翁得马焉知非祸): Այն երկու տարբերակով էլ օգտագործվում է:

Այս բարոյախրատական պատմության սկզբնաղբյուրը Լյու Անի կողմից կազմված «Խուա ՆանՁը» կոչվող ժողովածուն է (մ.թ.ա. մոտ 139 թ.): Հետագայում ժողովածուի մեջ ընդգրկված այս փոքրիկ պատմությունը ենթարկվել է տարբեր վերամշակումների, վերածվել նաև ասույթի: Հայ ընթերցողներին եմ ներկայացնում «Ծեր մարդու կորած ձին» (Սայ Վընն շը մա / sài wēng shī mǎ -塞翁失马) առակը[2]:

***

Հնում Հյուսիսային սահմանների մոտ ապրելիս է լինում մի մարդ, որ կարողանում էր բուժել շատ լավ ձիեր: Բոլորը նրան կոչում էին Սայ Վընն: Մի օր Սայ Վընի ձիերից մեկն ախոռից փախչում է ու գնում-հասնում սահմանի մոտ գտնվող Խու ցեղի բնակավայրը: Հարևանները հենց իմանում են այդ լուրը, շտապում են մխիթարել Սայ Վընին, որ նա շատ չտխրի ձիու կորստի համար: Սակայն Սայ Վընը բնավ էլ տխուր չէր, այլ ժպտալով պատասխանում է.

- Թեև իմ ձին անհետացել է, սակայն դա դեռ չարիք չէ:

Մի քանի ամիս հետո այդ նույն ձին, որ փախել էր, վերադառնում է՝ իր հետ բերելով Խու ցեղից մեկ այլ շատ ընտիր տեսակի ձի: Հարևանները, լսելով այդ մասին, հերթով շտապում են Սայ Վընի մոտ՝ շնորհավորելու նրան: Սակայն Սայ Վընը, ընդհակառակը, հոնքերը կիտելով, ասում է նրանց.

- Պատահական կերպով եկած այս ընտիր ձին, վախենամ, այնքան էլ բարիք չէ:

Սայ Վընն ուներ մի որդի, որը շատ էր սիրում ձի հեծնել: Մի օր տղան հեծնում է Խու բնակավայրից եկած ձին և անզգուշաբար ընկնելով՝ կոտրում ոտքը: Հարևանները նորից վազում են Սայ Վընի տուն՝ նրան մխիթարելու, սակայն զարմանում են, երբ նա անտարբեր կերպով ասում է.

- Չնայած իմ տղան կոտրել է ոտքը, բայց, ո՞վ գիտե, գուցե դա բարի է:

Հարևանները, ապշած նրա խոսքերից, մտածում են, թե Սայ Վընը վշտից խելքը թռցրել է:

Շատ չանցած՝ Խու ցեղը նրանց դեմ պատերազմ է սկսում: Բոլոր երիտասարդ տղաները կանչվում են բանակ: Նրանց մեծ մասը զոհվում է պատերազմի դաշտում՝ արագաշարժ ու դաժան Խու զինվորների ձեռքից, իսկ Սայ Վընի տղան, ոտքը կոտրած լինելու պատճառով, չի կանչվում բանակ՝ այդպիսով փրկելով կյանքը: Միայն այդ ժամանակ են հարևանները հասկանում, թե այն օրը Սայ Վընի ասած խոսքերի տակ ինչ իմաստություն էր թաքնված:

Մեր կյանքում կան շատ բաներ, որոնք նախասահմանված են: Նույն բանը կարող է լինել և՛ օրհնություն, և՛ անեծք, միշտ չէ, որ կարելի է միանշանակ դատել՝ այն բարի՞ք է, թե՞ չարիք: Ընդհակառակը, պետք է թողնել, որ ամեն ինչ ընթանա իր բնական հունով. հանդիպելով բարեբախտության՝ չպետք է չափազանց ինքնագոհ դառնալ, իսկ դժբախտության ժամանակ չպետք է հիասթափվել, այլ՝ խնդրին նայել սթափ:

---

1. Չինարեն՝ sài wēng shī mǎ , yān zhī fēi fú / 塞翁失马，焉知非福:

2. Այս առակն ունի իր ավելի կարճ տարբերակը, որի բովանդակությունն ամբողջովին նույնն է, միայն այն տարբերությամբ, որ կարճ տարբերակում բաց են թողնված մի շարք տեղեկություններ: Օրինակ, կարճ տարբերակում չենք հանդիպում Սայ Վընն անվանը:

Թարգմանությունը չինարենից՝
ԱՆՆԱ ԱԴԱՄՅԱՆԻ



ՀԳՄ վարչությունը շնորհավորում է գրականագետ, թարգմանիչ ՀՐԱՉԻԿ ԲԱՅՐԱՄՅԱՆԻՆ ծննդյան 75-ամյակի առթիվ

«Գրական թերթը» միանում է շնորհավորանքին

Ալեքսանդր Խախանովը (Խախանաշվիլի) հումանիտար գիտությունների անվանի գործիչներից է տվյալ բնագավառի բազմաթիվ ոլորտներում՝ փիլիսոփայություն, պատմություն, հնագիտություն, բանասիրություն, բանահյուսություն, ազգագրություն, լեզուներ (հիմնականում՝ հնդեվրոպական և կովկասյան), կրոն և այլն: Նյութական ու հոգևոր մշակույթի բազում նշանակալից հարցերի վերաբերյալ աշխատանքները Խախանովը գրել է վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն և գերմաներեն՝ քաղաքական ու մշակութային հարաբերությունների բանիմաց քննությամբ: Նա ակտիվորեն թղթակցել է եվրոպական, ռուսական («Русские ведомости», «Этнографическое обозрение», «Вестник Европы», «Журнал для всех», «Вестник всемирной истории», «Кавказский вестник») և կովկասյան գիտական հեղինակավոր բազմաթիվ հանդեսներին:

Ծնվել է Վրաստանի Գորի քաղաքում (3 հունվարի 1864 թ.), քահանայի ընտանիքում, ուսման առաջին տարիներն անցկացրել է ծննդավայրի գավառական դպրոցում, որտեղ դասավանդել է նաև իր հայրը, 1884 թ. ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի դասական գիմնազիան, այնուհետև ընդունվել է Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը՝ վերստին ցուցաբերելով արտասովոր բարձր առաջադիմություն: Բուհն ավարտելուց հետո՝ 1888 թ., հրավիրվել է Լազարյան ճեմարան (աշխատել է մինչև կյանքի վերջը՝ 25 հուլիսի 1912 թ., մահացել է թոքախտից): Վրացագիտական առարկաներ է դասավանդել նաև Մոսկվայի համալսարանում և մայրաքաղաքի կանանց գիմնազիաներում:

Որքան հայտնի է, Խախանովը հայագիտական աշխատություն չի թողել (ռուսերեն և վրացերեն նրա երկերի ցանկերում խոսք չկա այդ մասին), բայց Վրաստանի պատմությանը, վրաց գրականությանն ու լեզվին, վրաց ազգագրությանը, բանահյուսությանը և հարակից այլ գիտաճյուղերին նվիրված աշխատությունների լուսանցքներում, տողատակերում, ծանոթագրություններում անդրադարձել է նույն գիտակարգերի հայկականությանը, երբեմն՝ հայերեն, երբեմն՝ գրաբար, երբեմն էլ՝ թարգմանաբար՝ վրացերեն կամ ռուսերեն և փաստերի ու տեղեկությունների հերթականությամբ, ըստ զուգադրական կանոնների, հանգել է գործիմաց եզրակացությունների: Այդ մեկնությունների հավաքումն ու ամփոփումը կարող են ամփոփ հոդվածներ գրելու նյութ դառնալ, ինչին վերապահված է սույն հակիրճ տեղեկատվությունը:

Ճեմարանում աշխատելու տարիներին Խախանովը, բնականաբար, մտերմացել է հայ գործընկերների հետ և ձեռքի տակ ունենալով հարուստ սկզբնաղբյուրներ՝ հետաքրքրվել է հայոց պատմության, հայ մշակույթի, առհասարակ հայ իրականությանն առնչվող բազմաբյուր հարցերով: Որոշ ծանուցումներ նա լրացրել է հայ բանահյուսության նմուշներով, վանքերի, ամրոցների, հուշարձանների, ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրությամբ: Առհասարակ հայկական սկզբնաղբյուրների մեջ խորամուխ է եղել ոչ թե դեպքից դեպք, այլ՝ պարբերաբար, երբ հետազոտությունների ժամանակ ցանկացել է համադրել և խոսել նաև հարևան երկրի նույնաբնույթ երևույթների մասին:

Հեղինակային որոշ դիտողություններ հիշեցնում են, որ անձամբ կամ գործընկերների ուղեկցությամբ շրջագայել է Երևանի նահանգում, Նոր Բայազետի գավառում, Նախիջևանի ամբողջ տարածքում, ինչպես նաև Վրաստանի հայաշատ վայրերում և անհրաժեշտ տեղեկություններ ամբարել այդ վայրերում կողք կողքի բնակվող հայ և տարածաշրջանի այլ ժողովուրդների մենթալիտետի մասին:

Մասնավորապես Նոր Բայազետի գավառի Երանոս գյուղում կատարած ազգագրական գրառումների հիման վրա հրատարակել է բավականին հետաքրքիր ուսումնասիրություն (Из жизни армян Новобаязетского уезда, Эриванской губернии // “Этнографическое обозрение”, М., 1893, № 2)՝ Ինչո՞ւ Նոր Բայազետ: Ի պատասխան ակնկալվող հարցի՝ նա նախ շարադրել է գավառի անվան հակիրճ պատմությունը, ապա վերլուծել տեղացիների հարսանեկան ծեսերը, երգերն ու պարերը, կրոնական արարողությունները, հավատալիքները, ընտանիք ստեղծելու ավանդույթը և այլն: Որոշ անդրադարձներ հետաքրքիր են նաև այսօր: Ըստ հեղինակի՝ կայացած գերդաստանի գլխավորը տղամարդն է, նրա բնորոշումով՝ *Տանուտերը,* որի իրավունքների մասին շատ չի խոսում: Փոխարենը հավուր պատշաճի բացատրում է ընտանիքի իգական սեռի՝ չափահաս թե անչափահաս, ներկայացուցիչների «մեծավորի»՝ *Տանտիկինի* իրավունքները: Բայց և այնպես նրա «իշխանությունը» հիմնականում տարածվում է հասուն տարիքի անձանց վրա, նրանց է կարգադրություններ անում՝ հարսներ թե աղջիկներ, ո՛վ պետք է կերակուր պատրաստի, ո՛վ սեղան գցի, ո՛վ կով կթի, ո՛վ գուլպա գործի, ո՛վ սենյակ հավաքի և այլն: Մեղանչողին կարող է պատժել՝ զրկելով ճաշից: *Տանուտերը* ցանկության դեպքում կարող է առարկել կամ ուղղորդել *Տանտիկինին*, բայց «առհասարակ նա չի խառնվում կնիկների գործերին»:

«Վրաց գրականության պատմության» իր հեղինակած ակնարկների երրորդ գրքում Խախանովը, քննելով վրացական էպոսը և պարականոն գրվածքները (ապոկրիֆ), պատմական ազդեցության շերտավորումով համեմատական մեթոդ է կիրառում, համադրում հայկական, հունական, սլավոնական ապոկրիֆների հետ և դրանց շուրջ դատողություններ անում: Շարունակության մեջ ընթերցողի ուշադրությունը հրավիրում է Սայաթ-Նովայի կյանքի ու գրական գործունեության վրա: Նա գրում է. «Աղա-Մահմեդ խանի կողմից Թիֆլիսը գրավելու ժամանակ սպանվեց Վրաստանի նշանավոր երգիչ, սազանդար Սայաթ-Նովան: Նա վրաց Հերակլ II թագավորի պալատական տրուբադուրն էր: Հարյուր տարի առաջ Սայաթ-Նովայի անունը Թիֆլիսում փառավոր հնչում էր ամենուր՝ արքունի պալատից մինչև «խալխի» խրճիթները: Նա աղքատ հայորդի էր, արհեստով՝ ջուլհակ, կոչումով՝ երգիչ, երգահան: Երիտասարդական տարիներին խնջույքասեր երգիչ էր, կնոջ մահից հետո՝ ճգնավոր Հաղպատի վանքում, բայց կյանքը վերջացրեց որպես նահատակ, խաչը ձեռքին՝ թշնամու մուտքը եկեղեցի արգելելու համար: ...Նրա երգերը նվիրված են սիրո վայելքին, սիրած էակի հմայքին ու գեղեցկությանը: Գրել է ոչ միայն հայերեն, այլև վրացերեն ու թուրքերեն, որոնք դեռևս անտիպ են»:

«Հայերի կացությունը վրացական թագավորությունում» ծավալուն հոդվածում Ալ.Խախանովը, հետևելով դեպքերի ընթացքին, մասնավորապես դիտում է. «...Հաճախ դժբախտությունը միակ շաղախն է, որի վրա նոր շենք է բարձրանում... և Վրաստանի ու Հայաստանի պատմության էջերը մեզ պատմում են նրանց տանջանք-տառապանքների, ավերված շենների ու պղծված սրբավայրերի մասին»:

Նույն հոդվածում նշում է, որ 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո հայերն առանձնացան, սակայն բաժանվելը հայերի և վրացիների հարաբերություններում սրացման պատճառ չդարձավ: «Հետագայում,- շարունակում է հեղինակը,- ճիշտ է՝ վրաց թագավորներ Բագրատ IV-ը, Դավիթ Շինարարը և Թամար թագուհին ապարդյուն փորձեցին միավորել հայկական և վրացական եկեղեցիները, բայց բարեկամական կապերը չխաթարվեցին, ավելին՝ Դավիթն ազատագրեց Հայաստանի մայրաքաղաք Անին և ավեր դարձած պետության շահերից ելնելով՝ հայերին վերաբնակեցրեց Վրաստանում՝ նրանց համար կառուցված քաղաքներում: Հայերի հանդեպ ցուցաբերելով սեր ու բարյացակամություն՝ նա այցելում էր հայոց եկեղեցիներ և օրհնություն ստանում հայ քահանաներից»:

Արծարծված հարցերից բացի, Խախանովը յուրովի բանաձևում է նաև Հայոսի և Քարթլոսի «հարազատ եղբայրներ լինելու» պատումի ծագման պատճառները. «Լեգենդը առաջանում է... ամրապնդելու համար այն բարդ հասարակական կարգը, ավանդույթները և աշխարհայացքը, որը ձևավորվել է դարերի ընթացքում», այնուհետև՝ «եղբայրության գաղափարը առաջադիմական գաղափար է, և հենց ժողովուրդների անցած ուղին է նպաստել զրույցի առաջացմանը, որովհետև նվաճողների դեմ այդպիսի մտքեր սերմանելը, որպես կարևոր գործոն, դարերի ընթացքում եղել է հայ, վրաց ժողովուրդների և նրանց առաջադեմ գործիչների ուշադրության կենտրոնում»: Նման բանաձևումը, իր հերթին, նույնպես արժանի է գովեստի:

Խախանովը համոզված է, որ «Վրացի արքաները երբեք տարբերություն չեն դրել մեր երկու ժողովուրդների միջև, նրանք ընձեռել են հավատքի ազատություն, քաղաքական և քաղաքացիական հավասար իրավունքներ: Հետաքրքիր է,- հիմնավորում է գիտնականը,- որ վրացիները, լինելով ուղղափառ քրիստոնյաներ, հակադրվում էին միայն մահմեդականներին, բայց ո՛չ առանձնացած հայոց եկեղեցուն կամ նրա հավատարմատարներին: Տարբեր եկեղեցիների պատկանելու փաստը չէր խանգարում, որ հայերն ու վրացիները կազմեին ընտանիքներ, ստեղծեին ազգակցական կապեր: Ավելին՝ նրանք ունեին ընդհանուր սրբեր»:

Հեղինակը հավաստում է, որ դարերի ընթացքում վերելք են ապրել նաև գրական-մշակութային կապերը: Վրացի գործիչները թարգմանել կամ, ըստ հայկական նմուշների, ընդօրինակել են օրենսդրական, պատմագրական կարևորություն ունեցող մի շարք երկեր, հատկանշական է Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոցը»:

Հեղինակի հերթական գրառումը հեռու չէ իրականությունից. «Հայերը, մեծ եռանդ ու նպատակասլացություն դրսևորելով, ժամանակի ընթացքում կարողացան հարստություն կուտակել և ղեկավար դիրքերի հասնել պետական ապարատում»: Այդ գործիչներից նա հիշատակում է Թամար թագուհու արքունիքի անվանի խորհրդական Զաքարիա Մխարգրձելիին (Երկայնաբազուկ), հետագա ժամանակաշրջանից՝ գեներալ-մայոր Երեմիա Արծրունուն և ուրիշներին, որոնք ստանալով ազնվական և իշխանական կոչումներ՝ ամրապնդում էին իրենց դիրքերը և հասնում վերընթաց պաշտոնների: Օրինակ, Թումանովների (Թումանյան-Թումանիշվիլի) իշխանական տոհմի ներկայացուցիչները ժառանգաբար ստանում էին պետական քարտուղարի պաշտոնը, Թիֆլիսի մելիքի պաշտոնում պարբերաբար ընտրվում էր Բեբութովների (Բեհբության-Բեբութաշվիլի) իշխանական տոհմի հեղինակավոր անձանցից որևէ մեկը և այլն:

«Վրաստանում, հատկապես Հերակլ II-ի օրոք, կային մեծ դրամագլխի տեր բազմաթիվ հայեր, որոնք վրաց ազնվականներին տրամադրում էին վարկեր, աջակցում էին երկրի կրթական օջախներին, վանքերին ու եկեղեցիներին: Նրանք՝ ունևոր հայերը, հատկապես Աղա-Մահմեդ խանի ավերիչ արշավանքից հետո, վրաց ժողովրդի հետ ձեռք ձեռքի, օգնեցին, վերաշինեցին բազմաթիվ բնակավայրեր ու մշակութային օջախներ»,- վկայում է վրացի գիտնականը:

Հրաչիկ ԲԱՅՐԱՄՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԸ

«Հայերի հարստանալն ու բարձր պաշտոններ զբաղեցնելը այնքան էր գրավում ու գայթակղում վրաց իշխանազուններին ու ազնվական փեսացուներին,- խոստովանում է հեղինակը,- որ նրանք ձգտում էին հարսնացուներ ընտրել հայ մեծահարուստների ընտանիքներից»:

Հատուկ վստահության արտահայտություն է նաև այն իրողությունը, որ հայ երիտասարդները զորակոչվում էին արքունական և պետական անվտանգության զորամասերում ծառայելու,- այս միտքը նույնպես փաստում է Խախանովը:

Վրաստանի գյուղաբնակ հայերը վրացի երկրագործների հետ զբաղվում էին հողագործությամբ, անասնապահությամբ, գինեգործությամբ, շերամապահությամբ, ինչպես նաև մերձարևադարձային կուլտուրաների մշակմամբ, իսկ քաղաքաբնակ հայերը հիմնականում հանդես էին գալիս վարչական աշխատանքների, գիտության և առևտրի ոլորտներում, մեծապես նպաստում էին երկրի շենացմանը, նրա հեղինակության բարձրացմանն ու ազդեցության ոլորտների ուժեղացմանը համառուսաստանյան առումով:

Ամենայն հավանականությամբ՝ Խախանովը, հատկապես Լազարյան ճեմարանում աշխատելու տարիներին, զբաղվել է նաև լեզվաբանական գիտակարգերի ուսումնասիրությամբ: Նա պարզել է, որ հայոց ու վրաց լեզուները, տարբեր լինելով հանդերձ, իրենց շերտերում ունեն ուշադրության արժանի ընդհանրություններ, և յուրովի դիտարկել է այդ առնչություններին վերաբերող որոշ հայեցակարգեր: Քննության է առել նաև վրացական գրերի ստեղծման պատմությունը և արդյունքում՝ կրկնել իր նախորդներին:

Գիտնականն ուսումնասիրության նյութ է դարձրել նաև հայոց և վրաց բանահյուսությունը: Անդրադառնալով Մինաս Չերազի՝ Ալեքսանդր Մակեդոնացու մասին կատարած գրառմանը՝ թարգմանաբար ռուս ընթերցողին է ներկայացրել հույն զորավարի մասին հեքիաթային տարրերով հագեցած հայկական մի լեգենդի սյուժե:

Խախանովը ռուսերեն հրատարակել է նաև «Շուշանիկի տառապանքները» (հայ գրականության մեջ՝ «Շուշանիկ Վարդենի») վկայաբանական երկը, որը, ի դեպ, հայտնի է հայոց և վրաց լեզուներով և հատկապես Թիֆլիսում լույս է տեսել բազմիցս, ընդ որում՝ երկուստեք թարգմանությամբ՝ հայերենը՝ վրացերեն, վրացերենը՝ հայերեն: Հուշարձանի երկլեզվյա տարբերակները հարյուրամյակներ շարունակ եղել են հայ, վրաց, ռուս և եվրոպացի բանասերների սևեռուն ուշադրության կենտրոնում:

Խախանովը վրաց ժողովրդից գրառել է հեքիաթներ, կազմել մեծածավալ ժողովածու և հայրենական հեքիաթների հիմնական մոտիվները, հատկապես դրական և բացասական կերպարները համադրել առավելապես հայկական հեքիաթների մոտիվների և գործող կերպարների հետ, բացահայտել դրանց ընդհանրություններն ու յուրահատկությունները և եզրաբանել, որ կենդանական աշխարհի հիմնական կերպարները՝ իրենց գործելակերպով և բնավորությամբ, առհասարակ ունեն բազում հետաքրքիր ընդհանրություններ, թերևս այն պարզ պատճառով, որ վաղուց անտի հայերը և վրացիները հարևան են, երկարատև շփումների ընթացքում փոխազդել են, միասնություն ձեռք բերել, երևույթ, որը առավել ակնհայտ է նրանց հեքիաթներում և բանահյուսական երկերում:

Անդրադառնալով Թիֆլիսում, Սղնախում, Ախալցխայում, Գորիում և Վրաստանի այլ վայրերում վրացիների հետ հոծ խմբերով բնակվող շատ ու շատ հայերի անունների խնդրին՝ գիտնականը նշում է, որ այդ անունները առկա են նաև վրացականում, ընդ որում՝ միևնույն արտաբերումով: Նույն նպատակով նա շրջագայել է Նախիջևանի գավառում և հանգել մեկ այլ դրույթի, որ չնայած հայերը նշված վայրերում ապրում են թուրքերից մեկուսի, բայց առանձնապես քիչ չեն այն հայուհիները, որոնց անունը մահմեդական ծագում ունի: Վկայում է «հայկականացված» կանացի տասնյակ անուններ՝ ռուսերեն թարգմանությամբ և լուսաբանումով:

Բավարարվենք Խախանովի աշխատություններից մեկի վերջաբանից մի հատվածի մեջբերումով, որտեղ արտահայտում է հետևյալ խոսուն միտքը, որ բազում հայեր, վրացիների հետ դարեր ապրելով կողք կողքի, ձևավորել են բարեկամական հարաբերություններ, գիտամշակութային երկխոսություններ, ավանդույթներ, զգալի լումա ներդրել առանձնապես հայ-վրացական հարաբերությունների բնագավառում, որոնք հետագայում գործելու հիմք են դարձրել հենց իրենց համար: Իսկ օտար նվաճողների դեմ համատեղ պայքարի գաղափարը միշտ էական է եղել մեր առաջադեմ գործիչների համար, և նրանք բարձրաձայնել են դա, ուստի՝ «հետադարձ հայացք ձգելով մեր պատմական ուղու վրա՝ կարող ենք վստահաբար ասել, որ այս երկու ազգերի միջև թշնամության կամ անհանդուրժողության խնդիրներ չեն եղել: Ուրիշների համար այս փաստերի հավաստումը թերևս լինի բոլորովին անսպասելի, բայց նրանք թող չմոռանան, որ՝ dies diem docet...»:

(լրագրային տարբերակ)

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԽԱՂԱՂ ՆՎԻՐՈՒՄԸ

Բարձրագոչության «աստղառատ» ներկա ժամանակներում այդ մթնոլորտից օտարված, իրենց կոչումին ու նվիրումին հարազատ՝ շարունակում է արարել մարդու այն տեսակը, որը վստահաբար միշտ կրում է գնահատման բարձրագույն չափանիշի՝ մտավորական լինելու խորհուրդը: Այս բնութագիրը լիովին վերաբերում է Հրաչիկ Բայրամյանին: Գրականագետ, թարգմանիչ, հայ-վրացական բազմաճյուղ կապերի գործնական կրողներից մեկը, որ մտքի մշակ է և ոչ թե գործիչ, նա վրաց գրականության պատմության, հայերեն-վրացերեն բառարանային համադրումների, ուսումնական ձեռնարկների, գործնական դասընթացների ու զրուցարանի հեղինակ է, ով գրավոր վաստակի արդյունքը իրացնում է նաև ուսանողական լսարանում՝ կրկին խաղաղ լռությամբ տանելով իր նկատմամբ եղած սերն ու հարգանքը: Մտերիմներն անգամ գուցե չգիտեն Հայաստանի ու Վրաստանի պարգևների ամբողջ շարքի մասին, քանի որ առաջնային է եղել կարևորը՝ 20-ի մոտ գեղարվեստական ու գիտական երկերի թարգմանությունները, 70-ից ավելի հոդվածները, մեկ տասնյակին մոտեցող ժողովածուների կազմումն ու խմբագրումը, իսկ դրանց մեջ ընթերցող լայն շրջանակների սեփականությունն են դարձել մանավանդ Նոդար Դումբաձեի, Ռևազ Միշվելաձեի և այլոց վեպերի ու պատմվածքների թարգմանությունները:

Վրաց իրականության հետ կապի մեջ պատահականությո՞ւնն է դեր խաղացել՝ այն, որ ծննդավայրը Նոյեմբերյանի շրջանի Բաղանիս գյուղն է, որի և մյուս գյուղերի բնակիչների համար «քաղաքի» ընկալումը կապվում էր մոտ գտնվող Թիֆլիս-Թբիլիսիի հետ, թե՞ ուսանողների փոխանակման գործընթացի պահանջով Թբիլիսիի պետական համալսարանում սովորելը, բայց արդյունքում շահել է մտավորական աշխարհը: Իրեն միշտ բնորոշ լրջախոհությամբ ասում է, թե վանողը թվաբանության հուշած «75-ն» է, որը, ինչքան էլ «փնթփնթա», կապ չի ունենա արածի ու անելիքի նկատմամբ նվիրումի հետ: Եվ ուրեմն՝ այդ խաղաղ նվիրումն ու վաստակը պիտի շարունակի բնութագրել Հրաչիկ Բայրամյանին՝ այս օրերին ավելացնելով շնորհավորանքի անկեղծ ժպիտները և հետագա գործունեության մեջ նույն եռանդի վստահ ցանկությունը:

Վազգեն ՍԱՖԱՐՅԱՆ

ԱՐԳԱՍԱՎՈՐ ՈՒՂԻ

Հունիսի 18-ին լրանում է հմուտ վրացագետ, գրականագետ, թարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ՀՀԻ հայ-վրացական հարաբերությունների բաժնի վարիչ, գրի ու գիտության նվիրյալ մշակ, ազնիվ մտավորական ու մեծատառով մարդ Հրաչիկ Բայրամյանի ծննդյան յոթանասունհինգ ամյակը:

Հայ և վրաց գրական ընտանիքների շատ ու շատ ներկայացուցիչների կողմից սիրված մեծարգո՛ հոբելյար, անհնար է վերջին մի քանի տասնամյակի հայ վրացագիտությունն ու հայ-վրացական գրամշակութային հարաբերությունները պատկերացնել առանց Ձեզ, Ձեր բարեխիղճ ու բոլորանվեր աշխատանքի: Ձեր շնորհիվ հայ ընթերցողը ծանոթացել է վրացի դասական և ժամանակակից խոշորագույն գրողների՝ 100-ից ավելի լավագույն ստեղծագործությունների: Արգասավոր ուղի եք անցել նաև որպես գիտնական՝ ավելի քան 150 տարաբնույթ գիտահետազոտական աշխատանքներ: Հայաստանցի բազում ուսանողներ և վրացագիտական առարկաներ անցնող դպրոցների սաներ Ձեր հեղինակած դասագրքերով ու ձեռնարկներով են ստացել և ստանում վրացագիտության վերաբերյալ գիտելիքներ: Օտարազգի մի քանի նշանավոր հայագետ-վրացագետներ վրացերենի իրենց նախնական գիտելիքները ևս ստացել են Ձեր շնորհիվ: Մեծարգո տյա՛ր Բայրամյան, ընդունե՛ք, խնդրեմ, սիրով, ջերմությամբ ու ակնածանքով շաղախված իմ բարեմաղթանքներն ու շնորհավորանքները: Վայրկյան անգամ չկասկածեք, որ այս բարեմաղթանքներն ու շնորհավորանքները բխում են Ձեր բոլոր բարեկամների, ընկերների, գործընկերների, նախկին ու ներկա սաների, Ձեզ հետ տարբեր առիթներով թեկուզ կարճատև առնչություն ունեցած մարդկանց սրտերից: Քաջառողջություն, արևշատություն, ստեղծագործական բեղունություն Ձեզ, սիրելի՛ հոբելյար, մեզ էլ՝ Ձեր ներկայությունն ըմբոշխնելու, Ձեր արարման նորանոր նվաճումներով մեր գիտելյաց պաշարը հարստացնելու բարեբախտություն:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՈՒՐՋ

Մեր սիրելի՛ Հրաչիկ, այսօր լրանում է քո 75-ամյակը: Դա շատ է թե քիչ՝ գնահատվում է ոչ թե ապրած ժամանակով, այլ՝ այդ ժամանակում ապրած կյանքի արժեքով, արված գործով, ապագային պահ տրված հարստությամբ: Ծանոթ լինելով քո կենսագրությանը, տարիների ընթացքում ստեղծած մշակութային հարստությանը, ապագային թողնված ժառանգությանը՝ վստահաբար կարող ենք ասել, որ ապրել ես ոչ թե 75, այլ՝ մի քանի անգամ 75 տարի:

Երջանիկ է այն մարդը, որն աշխարհ գալով՝ չի միանում միլիոնավոր ու միլիարդավոր մարդկային անհատներին, որոնց ո՛չ գալն է իմացվում, ո՛չ գնալը: Դու քո ստեղծագործ աշխատանքով արարել ես մի յուրահատուկ աշխարհ՝ քո աշխարհը, ինչը եզակիներին է հաջողվում, որը կշարունակի ապրել քեզնից հետո:

Այսօր նայելով քո քրտնաջան, անխոնջ տքնանքի արգասիքին՝ վստահորեն կարող ենք ասել, որ մենակով մի ամբողջ ստեղծագործական խմբի աշխատանք ես կատարել: Տարբեր աշխատությունները, գեղարվեստական, գիտական և հանրամատչելի երկերի թարգմանությունը վրացերենից հայերեն, գիտական հոդվածները, կազմած, խմբագրած ու հրատարակված գործերը, ինչու չէ, նաև վրացական հարյուրավոր բանաստեղծությունների տողացիները տասնյակ հազարավոր էջեր են կազմում: Եվ շատ կարևոր է, որ դա արել ես լռությամբ, առանց թմբկահարելու ու ցուցադրության:

Բացի ազգային արժեք ստեղծելուց, դու մեծագույն ներդրում ունես նաև հայ-վրացական բարեկամության ասպարեզում՝ հայերեն թարգմանելով և հայ ընթերցողին մատուցելով եղբայրական ժողովրդի լավագույն գրական գործերը, արժանանալով գրական մրցանակների ու խրախուսական պարգևների: Քո թարգմանական գործերը մեծ արժեք ունեն հատկապես նրանով, որ ոչ միայն մայրենի լեզվին հավասար տիրապետելով վրացերենին, նաև քաջատեղյակ ես պատմությանն ու մշակույթին: Ահա թե ինչու է քեզ հաջողվել պահպանել թարգմանվող գործերի ասելիքն ու ոճը, հարազատ մնալ հեղինակների հոգևոր աշխարհին, հայ ընթերցողին ներկայացնել հարևան ու բարեկամ ժողովրդի գրական մշակույթը:

Սակայն նշել միայն գրական վաստակը և մոռանալ մարդ տեսակի մասին՝ կնշանակի քո մարդկային դիմանկարն ստեղծել կիսով չափ: Մենք մեզ երջանիկ ենք զգում, որ ունենք քեզ նման ընկեր, որ մարդկային եզակի դրական հատկանիշների կրողն է՝ սկսած ազգասիրությունից մինչև մարդասիրություն:

Սիրելի՛ ընկեր, սրտանց շնորհավորում ենք վաստակաշատ 75-ամյակդ, մաղթում երկար, առողջ և ստեղծագործական տքնանքով զարդարված կյանք: Քանզի քեզ նման եզակի անհատները մեր ազգի զարդն են ու պարծանքը:

Հովիկ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
Էմմա ԲԵԳԻՋԱՆՅԱՆ

ԳՈՒՅԺ



ՆԵԼՍՈՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Խորին ցավով հայտնում ենք, որ կյանքից հեռացել է թարգմանիչ ՆԵԼՍՈՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ:

Ն. Ալեքսանյանը ծնվել է Հայաստանի Էջմիածին քաղաքում: Սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության բաժնում: 1979 թ. ավարտել է ԽՍՀՄ Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտի (Մոսկվա) թարգմանչական բաժինը: Աշխատել է ՀԳՄ «Լիտերատուրնայա Արմենիա» հանդեսում, «Նոյյան Տապան» և «Արմենպրես» լրատվական գործակալություններում, «Ռեսպուբլիկա Արմենիա» օրաթերթում: 1989 թ.-ից եղել է Հայաստանի գրողների միության անդամ: Նրա թարգմանությամբ առանձին գրքերով և ժողովածուներով լույս են տեսել հայաստանյան և սփյուռքահայ արդի և դասական տասնյակ գրողների ստեղծագործություններ ինչպես Հայաստանում և Ռուսաստանում, այնպես էլ արտերկրում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իսրայելում, Լեհաստանում և այլուր: Ռուսերենից հայերեն է թարգմանել գիտական և իրավաբանական բնույթի դասագրքեր: Հայաստանյան մամուլում հրապարակել է տասնյակ հրապարակախոսական հոդվածներ: Հեղինակել է շուրջ 50 թարգմանական գիրք, որոնցից են Ռուբեն Հովսեփյանի «Ամենատաք երկիրը» (1983 թ.), «Ապրիլ» (1985 թ.), Կարեն Սիմոնյանի «Միքայել Նալբանդյան» (1984 թ.), Ռազմիկ Դավոյանի «Եթե աստված կամենա» (2009 թ.), Հովհաննես Թումանյանի «Հեքիաթներ» (2012 թ.) և այլն: Արժանացել է ՀՀ ՊՆ մրցանակի:

ՀԳՄ վարչությունը ցավակցում է հրաշալի թարգմանչի, հարգված գրչընկերոջ ընտանիքին, հարազատներին, ընթերցողներին:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀԳՄ վարչությունը ցավակցում է Պերճուհի Ավետեանին՝ սիրելի մոր՝ Մարի Մկրտիչեան-Ավետեանի մահվան կապակցությամբ:

ԱՔՍՈՐՈՒՄ

Բռնադատվածների հիշատակի օրվա առիթով ստալինյան ռեպրեսիաների զոհի՝ Գեղամ Եգորի Սարգսյանի հուշագրությունից մի հատված

Ինձ կալանեցին 1937 թվի հունվարի 10-ին, երեք ամիս պահեցին Չեկայի բանտում և քննություններն ավարտելուց հետո՝ մարտի 15-ին, ուղարկեցին Երևանի կենտրոնական բանտ, իսկ օգոստոսի 15-ին աքսորեցին Հեռավոր Արևելք՝ «ուղղիչ աշխատանքային ճամբարները»՝ 5 տարվա ազատազրկման և բոլոր իրավունքներից զրկելու դատավճիռ կայացնելով՝ առանց հիմնական մեղադրանքի, որպես սովետական իշխանության համար կասկածելի անձնավորության: Ինձ Չեկայի քննություններում մեղադրում էին, թե իբր Ախտայում աշխատելիս անդամակցել եմ հակահեղափոխական կազմակերպությանը, թե իբր տեղյակ եմ՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Քեմալ փաշային Թիֆլիսում ովքեր են տեռորի ենթարկել, որ ափսոսանք եմ հայտնել Խանջյանի սպանության առիթով: Այդ մեղադրանքներից ոչ մեկը չապացուցվեց: Ինձ և ինձ նման մարդկանց ազատելու փոխարեն՝ Չեկայի դատախազի ներկայացմամբ մեր գործերը քննվում են Մոսկվայում, որտեղ «Հատուկ գործերի խորհրդակցությունն» անխտիր բոլորին, իբրև սովետական իշխանությունների համար կասկածելի անձնավորությունների, աքսոր է նշանակում:

Երբ Երևանի բանտում էի, մեր բանտախցի կողքին գտնվող մահվան բանտախցում կալանված էին Հայաստանի լուսժողկոմ Ներսիկ Ստեփանյանը, Կենտրոնական գործկոմի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը, Կոմունալ տնտեսության նախարար Արամայիս Երզնկյանը, Ժողկապի Հայաստանի լիազոր Մանուչարյանը, բանաստեղծ Եղիշե Չարենցը և մի շարք անձինք, ովքեր մեծ ներդրում ունեին նոր Հայաստանի կառուցման գործում:

1937-ի օգոստոսին մի մեծ խումբ քաղաքական աքսորյալների, ձևականորեն բժշկական քննության ենթարկելուց հետո, բեռնատար մեքենաներով հասցրին կայարան և լցրեցին նախօրոք գծերի վրա կանգնեցրած բեռնատար վագոնները՝ թույլ չտալով վերջին անգամ տեսակցել հարազատների հետ: Հետս ունեի իմ անկողինը, որ տնից էին ուղարկել ամիսներ առաջ, մի հին ճամպրուկ, մեջը՝ մի քանի կտոր սպիտակեղեն, և գրպանումս՝ միայն 3 ռուբլի փող: Հարազատներիս, որ կայարանում էին և ցանկանում էին ինձ տեսնել և շատ բաներ հանձնել, թույլ չտվեցին մոտ գալ: Գիշերը Լենինականի կայարանում դարձյալ մի խումբ քաղաքական կալանավորների լցրին մեր վագոնը՝ թվով ինը մարդ, որոնցից չորսը՝ ուսուցիչներ: Մինչև Վլադիվոստոկ հասնելը տևեց 40 օր: Մեծ քաղաքների կայարաններում տեղի էր ունենում գնացքների փոփոխություն, ինչպես նաև՝ կալանավորներին ուղեկցորդ զինվորական խմբերի փոխարինում: Մի քանի կայարաններում էլ մեզ տարան բաղնիք: Այդ բոլոր գործողություններն օրերով ուշացնում էին գնացքների մեկնումը: Մեզ տալիս էին օրական 700 գրամ հաց, ձավարով սուպ՝ առանց մսի, և եռացրած ջուր: Երևանի բանտից մեզ կցել էին մի ոչ քաղաքական կալանավորի, որը գնացքների կանգառների ժամանակ կալանավորների համար գնումներ էր կատարում: Ես իմ 3 ռուբլին վաղուց էի սպառել և քնելու համար հատկացված տեղիցս համարյա դուրս չէի գալիս: Կալանավորներն իմանալով, որ ուսուցիչ եմ եղել, խնդրեցին մի բան պատմել՝ ճանապարհի ձանձրույթը փարատելու համար: Մինչև Վլադիվոստոկ հասնելը ես մեծ սիրով պատմեցի «Յո երբաս», «Սամվել», «Դավիթ Բեկ», «Գևորգ Մարզպետունի» վեպերը: Ընկերներիս հետաքրքրությանը չափ ու սահման չկար: Ամբողջ ճանապարհին նրանք ինձ առատորեն բաժին էին հանում իրենց գնումներից:

Կայարաններից մեկում մեզ տարան բաղնիք: Բաղնիքում մեզ սպասարկում էին 20-30 կանայք՝ նույնպես կալանավորներ: Մեր հագուստները կապոցներով տարան մաքրման, իսկ մեզ մերկանդամ մտցրին բաղնիք, որտեղ սպասարկում էին այդ կանայք: Նշանակված բժշկուհին երկու բուժքրոջ հետ ստուգում էր մեզ, իսկ մյուս կանայք վավաշոտ հայացքներով զննում էին կալանավորներին: Ականջիցս հիշեցի Աստվածաշնչի Սոդոմ-Գոմորը: Աստվածաշնչյան պատկերը իրականություն էր դարձել...

Մեր վագոնի նեղլիկ պատուհաններից տեսնում էինք շատ հետաքրքիր վայրեր՝ Վոլգայի կամուրջը, Օբ և Իրտիշ գետերը, Բայկալ լիճը, Արևելյան Սիբիրի պատկերները և այլն:

Սեպտեմբերի 25-ին հասանք Վլադիվոստոկ: Այստեղ մեզ տեղավորեցին քաղաքի հարավարևելյան կողմում՝ մի բարձունքի վրա կալանավորների համար կառուցված բազայում՝ շուրջը մոտ 10 հեկտար տարածություն՝ փշալարերով պատված, 5-6 տեղում՝ պահակների աշտարակ-դիտակետերով, և բակում՝ մի շարք շենքեր՝ ննջարանների և այլ պետքերի համար, կանանց և տղամարդկանց համար առանձին-առանձին: Գիշերները կանայք իրենք էին տղամարդկանց հրապուրում իրենց մոտ, և արդեն վակխանալիան սկսվում էր:

1937 թ.-ի նոյեմբերի 5-ին «Ջուրմա» անունով օվկիանոսային նավով մեզ տարան Մագադանի մարզի «Կալիմա» աքսորավայր: Մարզը տարածվում է Կալիմա գետի ավազանում՝ մոտ 100 000 կմ² տարածությամբ, իսկ Մագադան քաղաքը գտնվում է Ախոտի ծովի հյուսիսային ափին՝ Բուխտա-Նագաևա նավահանգստով: Մարզի գլխավոր հարստությունը ոսկին էր. 1937 թ. մարզում շահագործվում էր մոտ 230 հանք: Գերմանիայի՝ Ռուսաստանի վրա հարձակվելուց հետո Ստալինն առևտրատնտեսական պայմանագիր կնքեց իր դաշնակից Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ՝ 10 տարի Կալիմայում արտադրած ոսկին ԱՄՆ-ին հանձնելու և փոխարենը պարենամթերք, մանուֆակտուրա ու բեռնատար ավտոմեքենաներ ստանալու պայմանով: Ամերիկայից ապրանքներն ուղարկվում էին Պարսից ծոցով և Մագադանով: Ամերիկյան մի փոքր զրահանավ մշտապես կառանվել էր Մագադանի նավահանգստում, որում ապրում և աշխատում էին 30 ԱՄՆ ներկայացուցիչներ: Մագադանում «չեկային համակարգ» գոյություն չուներ. ամեն ինչ առատ էր ու էժան: Մարզում միայն 3 ամիս էր ամառ անում, մնացած ինն ամիսը ձմեռ էր՝ 40-50 աստիճան սառնամանիքներով: Ամռանն անտառները՝ տայգան, արթնանում էր, խոտը՝ կանաչում, նույնիսկ անտառներում հատապտուղ էր հասնում: Հյուսիսային բևեռին մոտիկ լինելով՝ այստեղ ամռան ամիսներին արևը մայր չէր մտնում, իսկ ձմռանն արդեն սպիտակ գիշերների լույսը ցերեկվա պես լուսավորում էր շրջակայքը:

Մագադանում 2 օր պահելուց, բժշկական քննություն կատարելուց և ձմեռային հագուստներ տալուց հետո մեզ խումբ-խումբ փակ ավտոմեքենաներով ուղարկեցին զանազան վայրեր՝ աշխատանքի: Ինձ 30 հոգու հետ ուղարկեցին Մագադանից 700 կմ հյուսիս-արևմուտքում գտնվող Բերելյոխ (գերմաներեն նշանակում է արջաձոր) կոչվող ավտոբազան, որը կառուցված էր Սուսոմ գետի ափին՝ համանուն բնակավայրի մոտ: Բազայից մի քանի խճուղիներ տանում էին դեպի այդ վայրերում շահագործվող ոսկու հանքերը: Գիշեր-ցերեկ ավտոմեքենաները երթևեկում էին այդ խճուղիներով: 30-ից երկուսս հայ էինք: Ընկերոջս անունն Արտաշ էր՝ Լենինականի Ախուրյանի շրջանից՝ իրենց գյուղի տիրացու: Լավ մեկնաբանում էր երազները. կալանավորներիս միակ մխիթարությունը երազների մեկնաբանումն էր: Մենք կտրված էինք աշխարհից. թերթերն արգելված էին մեզ համար: Բերելյոխի ճամբարում ևս 2 հայ կար: Մեկի անունը Թանգո էր. Հոկտեմբերյանի շրջանի Ղուզի Գիդան գյուղից էր, անգրագետ մի կոլխոզնիկ. հարբած վիճակում խորհրդային կառավարության անդամ Օրջոնիկիձեին հայհոյել էր, որ իր հարվածային կնոջը խանութում ստացած մահճակալներից չէին տվել: Դատապարտվել էր 8 տարվա կալանքի, 5 տարվա իրավունքների ազատազրկման և աքսորվել հեռավորարևելյան ճամբարներ: Մյուսի անունը նույնպես Արտաշես էր. ավտոմեխանիկ էր՝ Միջին Ասիայից. անգլիացիների մոտ վարորդ աշխատելու համար կալանել և աքսորել էին Կալիմա:

Մյուս օրը՝ վաղ առավոտյան, մեզ մի բրիգադի հետ տարան գետի ափը, որտեղ խճաքար պիտի հավաքեինք ցեմենտի շաղախի համար: Բրիգադավարը, որ 10 տարվա կալանք ուներ, գործարանում մեխանիկ էր աշխատել. միջահասակ, համակրելի դեմքով մի մարդ էր: Գիշերն իմ ձմեռային բամբակյա ձեռնոցները գողացել էին՝ թողնելով բրեզենտե ձեռնոցները, որոնցով աշխատում էի: Չնայած զգում էի, որ ձեռքերս մրսում են, սակայն Սիբիրի սառնամանիքի մասին գաղափար չունեի: Մի երկու ժամ աշխատելուց հետո հավաքվեցինք խարույկի շուրջ՝ տաքանալու: Բրիգադավարը բռնեց ձեռքերս և ուշադրությամբ զննելով՝ գլուխը տարուբերեց ու ասաց, որ ձեռքերս ցրտահարել եմ, ու ինձ տարավ հիվանդանոց: 15-օրյա բուժման ընթացքում գլխավոր բժիշկը՝ 10 տարվա աքսորի դատապարտված, մոտ 40 տարեկան մի համակրելի հրեա, ամեն օր մկրատով մատներիս ծայրերից ցրտահարված մսերը կտրում, դեղ էր դնում վրան և նորից վիրակապում: Իմ բախտից, եղունգներիս արմատները չէին ցրտահարվել: Կալիմայում շատ կալանավորներ հաշմանդամ էին դառնում ձեռքերի և ոտքերի ցրտահարումից:

Հասմիկ ՍԱՐԳՍՅԱՆ

Գրական թերթ

Գլխավոր խմբագիր՝
Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.
Նորայր Ադալյան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Աելիտա Դոլուխանյան, Ազատ Եղիազարյան, Գուրգեն Խանջյան, Սամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Սարիբեկյան

Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ- ն:
Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ:
Տպաքանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:
Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտատպության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ն՝
ՀԳՄ «Լ. Ջ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:

0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com